



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

25-28

Ս. ՉԱՐՈՂ

ԱՆՍՏՈՒՄ

Կ Ա Տ Ե Խ Ի Ջ Ի Ս Ը

ՄԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1931 թ.

215  
2-28

23 SEP 2009



215  
2-28

Ս. ՉԱՐՈՎ



ԱՆՍՏԱՎԱԾԻ  
ԿԱՏԵԽՆԻԶԻԱԸ

17993

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1931 թ.



ՏՆ 932 15

ԱՆԱՍՏՎԱԾԻ ԿԱՏԵՆԻԶԻՍԸ

Կաղմեց Ս. ԶԱՐՈՎ,

Խմբագրութեամբ ակադեմիկոս Դ. ՏՐԵՏՅԱԿՈՎԻ և  
Վ. ՅԵԼԻՆԻ

Բարեփոխված չորրորդ հրատարակութեան  
Գործնական ձեռնարկ բանվորական, կարմիր-բա-  
նակային և գյուղական ակումբների հակակրօնական  
խմբակների համար:

ՊԵՏՏՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ  
ՀՐԱՏ. 1494  
ԳՐԱՌ. 6092 (Բ)  
ՏԻՐԱԺ 4000 ՊԱՏՎԵՐ 142

ԲՆԱԿԱՆՈՒՄ  
ՅԵՆՆԵՐԻ

Հառաջարան 4-րդ հրատարակութեան համար.

Այս հրատարակութեան մեջ՝ նախորդ հրատարա-  
կութեան նման, պահպանված և հարցերի նույն թիվը  
և տպագրվում և խմբագրական աննշան փոփոխու-  
թյուններով:

1930 թ. հունվար

Ս. ԶԱՐՈՎ,

Հառաջարան 2-րդ հրատարակութեան համար.

Այս հրատարակութեան մեջ մենք փոփոխություն-  
ներ արինք № № 31 և 90 հարցերի պատասխանների  
մեջ. բացի դրանից՝ ավելացրինք դարձյալ 9 նոր հարց:

Ս. ԶԱՐՈՎ

### 1. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿՐՈՆԸ

ՀԱՐՑ 1. Ի՞նչն է ավելի առաջ յեղել՝ լո՞ւյսը, թե՞ արևը:

ՊՍՍՍԱՆ 1. Ըստ աստվածաշնչի՝ ստեղծագործութեան առաջին որը աստված ստեղծեց լույսը և միայն չորրորդ որը՝ յերկնային լուսատուները: Այժմ ամեն մի դպրոցական գիտե, վոր մենք լույսը ստանում ենք արևից: Աստվածաշնչի խառնաշփոթութունն առաջ է յեկել այն պատճառով, վոր աստվածաշունչը կազմելու ժամանակ չգիտեցին, թե ինչ կապ կա ցերեկների և գիշերների հաջորդականութեան և յերկրի իր առանցքի շուրջը արևի հանդեպ պտտվելու միջև:

Հ. 2. Յերկիրն ինչպե՞ս կարող էր բաժանվել ջրից և վո՞րտեղից է առաջ յեկել ջուրը:

Պ. 2. Ջուրն իր հեղուկ վիճակում՝ շնորհիվ հեղուկների հատկութեան, հոսել է յերկրի մակերևույթով ծանրութեան ազդեցութեան տակ, բնականաբար, բռնել է ավելի ստորին տեղերը, հովիտները—այսպես է բաժանվել ջուրը ցամաքից: Յերկրի ամբողջ պատմութեան ընթացքում յերկրի կեղևը տեղ-տեղ հավաքվել, ծալքեր է կազմել, տեղ-տեղ առաջ են յեկել նոր փոսեր ու այդ կապակցութեամբ՝ ցամաքի և ծովի գիրքը շատ անգամ փոխվել է: Այդպիսով, աշխարհի ամենաբարձր լեռներից մեկը—Ալպերը—առաջ ծովի հատուկ է յեղել: («Բեզբոժնիկ» լրագիրը):



Հ. 3. Ջուրն ինչպե՞ս կարող եր գոյանալ, յերբ մի ժամանակ յերկիրը հալած դրության մեջ եր:

Պ. 3. Ջուրը՝ մյուս իրերի նման, յերեք դրություն ունի՝ կարծր (սառույց), հեղուկ և դազանման (չոզի): Ց. 100° ջերմությամբ՝ ջուրը յեռում և, այսինքն՝ գազանման դրության և վերածվում: Ակներև և, վոր յերբ յերկիրը հալված դրության մեջ եր, ջուրն ել շոգիի դրության մեջ եր:

Ջուրը բարդ մարմին և, կազմված և յերկու գազից՝ ջրածնից և թթվածնից: Բարձր ջերմության մեջ ջրածինն ու թթվածինը պայթյունով միանում են ու դառնում ջուր: Կասկածից վեր և, վոր առաջին անգամ յերկրի վրա ջուրն առաջ և յեկել այդ գազերից (Բ. Լ.)

Հ. 4. Մարդիկ վո՞րտեղից իմացան, վոր յերկիրը հալված վիճակի մեջ և յեղել, յերբ այն ժամանակները դեռ մարդ ել չկար:

Պ. 4. Այն յենթադրության համար՝ թե յերկիրը բազմամիլիոն տարիներից առաջ հրահեղուկ դրության մեջ և յեղել, հիմք են ծառայում յերկու հանգամանք. նախ՝ դիտնականներն ապացուցեցին, վոր շատ աստղեր և մոլորակներ այժմ իսկ այդպիսի դրության մեջ են գտնվում. յերկրորդ՝ յերկրի ներսը մինչև այժմ ել դեռ չի սառել և հալված դրություն ունի: Դրա մասին վկայում են հրաբխային լեռների ժայթքումները, ջերմուկները, հանքային տաք ջրերը, հանքահորերի բարձր ջերմությունը և ցրա աստիճանի բարձրացումը համաչափ այն խորության, վոր մարդը կտրում-իջնում և դեպի յերկրի ներսը (Բ. Լ.):

Հ. 5. Քանի՞ տարի յե, ինչ գոյություն ունի յերկիրը.

Պ. 5. Ներկայումս յերկրի հասակը վորոշելու գանազան յեղանակներ կան: Այդպիսի յեղանակներից մեկն այն և, վոր վորոշում են քարի շերտերի հասակը, վորոնցից յերկրի կեղևն և կազմված: Ջրից նրատած քարաշերտերը յերկրի վրա պատահում են ամեն տեղ և մեկը մյուսի վրա յեն ընկած: Այդ բոլոր շերտերի հաստությունը մոտավորապես քառասուն վերսակամ մեկ միլիոն վերշուկ և կազմում: Իսկ մեկ վերշուկ հաստություն ունեցող շերտը ջրից նստում և մի քանի հարյուր տարվա ընթացքում: Հետևաբար, բոլոր շերտերը ջրից նստել են առնվազն մի քանի միլիոն տարվա ընթացքում: Աստղագետ Հերման Կլայնի հաշվով՝ յերկրի կարծր կեղևի կազմության ժամանակից մոտավորապես 2,000 միլիոն տարի յե անցել: Գիտնականներից վոմանք այդ թիվը մեծացնելով՝ 4,000 միլիոն տարվա յեն հասցնում: Ի՞նչ են նշանակում այդ թվերը յոթից մի քիչ ավելի հազար տարիների համեմատությամբ, վորոնք՝ ասավածաչնչի վկայության համաձայն, բաժանում են մեկ աշխարհի ստեղծագործությունից:

Հ. 6. Ինչպե՞ս և գոյացել կյանքը յերկրի վրա:

Պ. 6. Ժամանակակից դիտությունը հակամետ և հոգուտ այն կարծիքի, թե կյանքը գոյացել և միզնից միլիոնավոր տարիներ առաջ նախնական ովկիանում թանձրամած, դոնդող զանգվածի կույտերի ձևով, վորոնք ստացվել են զանազան քիմիական նյութերի բարդ միավորումից—անկենդան ընությունից: Պարզագույններից ծագել են ադիբախորշվորները, նրանց հաջորդել են ձիճուները, ավելի ուշ՝ ձկները, ել ավելի ուշ՝ յեր-

կակենցազները, ապա՝ սպանները, թուշուները և վերջապես կաթնասունները: Վերջինների բարձրագույն ներկայացուցիչը մեր ժամանակ հանդիսանում է մարդը:

Հ. 7. Մյուս մոլորակներն վրա չի կյանք կա:

Պ. 7. Այդ հարցին վերաբերյալ ճշգրիտ ավյայնել չունենք. մենք կարող ենք միայն յենթադրել, թե այն մոլորակների վրա՝ վորտեղ ջուր, սպ, համապատասխան կլիմայական պայմաններ կան, կյանքը հնարավոր է, բայց թե իսկապես կյանք կա՞, թե վո՛չ, ատայժմ ճշտապես հայտնի չէ:

Հ. 8. Ինչի՞ց է ստաջ յեկել մեր արեգակնային համակարգությունը:

Պ. 8. Սկզբում, շատ հարյուրավոր միլիոն տարիներ առաջ, արեւը մի հսկայական շիկացած պողանման գանգված էր ներկայացնում իրենից, վորն անընդհատ պտտվում էր իր առանցքի շուրջը: Երկացած գանգվածի պտույտի ժամանակ նրա ջերմության մի մասը անցնում էր տիեզերական տարածութայնը, իսկ ինքն՝ այդ գանգվածը ստուչում էր: Մարմինը ստուչելիս՝ սեղմվում է. ուստի և շիկացած միգածության ծավալը պետք է վոր հետզհետե փոքրանար, գաղանման դունդը պետք է սեղմվեր: Այդ դեպքում, կենտրոնախույս ույժի հետևանքով, այսինքն՝ այն ույժի, վորը ձգտում է վանել մարմինն ու նրա մասնիկները շարժման կենտրոնից, առաջ է գալիս միգածության անջատում, նրանից ողակ է բաժանվում: Իր կազմի այլատեսության հետևանքով՝ ողակի նյութը մասերի յեր բաժանվում, վորոնք տիեզերական ձգողական որեւքի

նորհիվ միասին կուչ ելին գալիս և դունդ կազմում: Գաղանման միգածության առաջին ողակի անջատումին հաջորդում են յերկրորդը, յերրորդը և այլն: Յերրդեկը ստուչում էլին, նրանք դառնում էլին մոլորակներ: Յուրաքանչյուր ողակ շարունակում էր պտտվել սկզբնական գաղանման գանգվածի հետ միասին. պտտվելիս՝ նա իրենից իր սեփական ոչակներն էր արձակում, այդպես են պտաջ յեկել մոլորակների արբանյակները, որինակի համար՝ յուսինը: Մոլորակներից վոմանք, ինչպես՝ Սատուրնը, նույնիսկ ողակն էլ են պահել:

Հ. 9. Նյութը վորտեղից է ստացվել:

Պ. 9. Մարդն ընտելացել է այն մաքին, թե յերբ մի իր դոյություն ունի, ապա ուրեմն մեկն ու մեկը նրան ստեղծել է: Յերբ կան իրեր, վորոնց մարդիկ են ստեղծել, յերբ ամեն մի իր՝ իր ստեղծողը, իր վարպետն ունի, ապա ուրեմն՝ ակներև է, վոր բոլոր իրերի ամբողջությունն էլ, այսինքն՝ աշխարհը, պետք է վոր իր ստեղծողն ունենա: Այդպիսով, մարդը պատկերացնում է իրեն տիեզերքը, վորպես մի «ձեռագործ», վորպես մի առանձին վարպետի աշխատանքի արտադրանք: Այդպիսի դատողությունը—վոր նշանակում է տիեզերքը մարդկային արշինով չափել—անհեղեղ և պարզամիտ նկրտումն է, պրետենզիա:

Սորապես սիալ է նույնիսկ մտածելն անգամ նյութի (բնություն) ստեղծագործության մասին:

Նյութն անվոչնչանալի յե: Կարելի յե մետաղը դազ դարձնել, կարելի յե գաղերը հեղուկ դարձնել, կարելի յե ամեն կերպ փոփոխել նյութը: Սակայն մի բան չի կարելի անել՝ չի կարելի նյութը վոչնչություն

դարձնել. նմանապես, վոչինչ չունենալով, չի կարելի այդ «վոչինչից» ինչ ստեղծել. չի կարելի «վոչինչը» նյութ դարձնել (Բ. Լ.): Դեռ մի հին-հունական իմաստուն՝ Դեմոկրիտն է ասել, թե վոչինչից վոչ մի բան չի ստեղծվի: Այս ի՞նչ է նշանակում: Այս նշանակում է, թե չի կարելի աշխարհ ստեղծել աստծու ցանկությամբ: Նյութը (բնությունը) հավիտենապես գոյություն ունի: Նյութը փոփոխության է յենթարկվում, սակայն չի վոչնչանում և «վոչինչից» չի ծագում:

Հ. 10. Յեթե մարդը կապիկից է առաջ յեկել, ապա ուրեմն ինչո՞ւ այժմ կապիկը մարդու չի վերասերվում:

Պ. 10. Կենդանիների նոր տեսակների կազմության և մեկ տեսակի մյուսին վերափոխելու պրոցեսն այնքան դանդաղ է կատարվում, վոր դրա համար անհրաժեշտ ժամանակը պետք է տասնյակ և հարյուրավոր միլիոն տարիներով հաշվել: Իհարկե, թե՛ մարդը, թե՛ կենդանիները և թե՛ բույսերն անընդհատ փոխվում են և այդ փոփոխումներով հանդես են գալիս նոր տեսակներ, սակայն մենք չենք կարող այդ փոփոխություններն անմիջապես նկատել, վորովհետև վոչ միայն մեր կյանքը, այլև մարդկության գոյության ամբողջ ժամանակն իսկ չափազանց կարճ է դրա համար: Գոյության տարբեր պայմանների հետևանքով՝ մարդու նախահայրերի մեջ զարգացումն ընթացել է յերկու ուղիով թյամբ, այն է՝ ձևերից փոմանք կապեկ են դարձել, մյուսները մարդ: Գիտությունն ամենևին չի պնդում, թե մարդը ծագել է ներկայումս ապրող կապիկից: Գիտությունը հաստատում է, թե մարդն ու կապիկը առաջ են յեկել մի ընդհանուր նախածնողից: Այդ կեն-

դանական-նախածնողից ծագումն են առել արդի մարդիկ և արդի կապիկները, վորովհետև զարգացումն ընթացել է տարբեր ուղիներով՝ մի ճյուղը մարդու գոյացմանն է տարել, մյուսը՝ արդի մարդակերպ կապիկների գոյացման (Բ. Լ.):

Հ. 11. Ինչպե՞ս են առաջ յեկել զանազան լեզուներն ու ցեղերը:

Պ. 11. Մարդու լեզուն հանկարծ չի հայտնվել, այլ աստիճանաբար է մշակվել: Սկզբում բառերը հընչյունների պրիմիտիվ, կոպիտ գուգորդություններ են յեղել, վորոնք նշանակել են այս կամ այն առարկան կամ գործողությունը: Յեվ վորովհետև շատ ժողովուրդներ հազարամյակների ընթացքում իրար հետ հարաբերություն չեն ունեցել, ուստի միանգամայն հասկանալի չէ, վոր այդպիսի ժողովուրդների մեջ պետք է մշակվելին բոլորովին տարբեր լեզուներ (Բեգբոժնիկ լրագիր):

Ներկայումս գիտությունը՝ ի դեմս գիտնականների մեծամասնության, ընդունում է, վոր թեպետև տարբերություններ կան մարդկային ցեղերի միջև, բայց այդ տարբերությունները՝ նրանց միջև յեղած նմանությունների համեմատությամբ, աննշան են և այդ հանգամանքն իրավունք է տալիս մեզ պնդելու, վոր բոլոր մարդիկ ծագել են մի ընդհանուր նախածնողից: Իսկ մարդկային ամեն մի ցեղի տարբեր հատկանիշներն ել բացատրվում են նրանով, վոր մի ընդհանուր նախածնող ունեցող մարդիկ յերկրագնդի զանազան յերկրներում են բնակություն հաստատել, զորտեղ նրանք ապրել են ու շարունակում են ապրել կլի-

մայի, սենդի և այլ բուխրովին տարբեր պայմաններում:

Հ. 13. Մարդը հոգի ունի՞ արդյոք:

Պ. 12. Ըստ կրոնի՞ մարդը կազմված է հոգուց և մարմնից, մարմինը մահկանացու յե, հոգին՝ անմահ: Մարդը կարող է ապրել, ուտել, շարժվել, մտածել հոգու շնորհիվ, վորը նրա մարմնի մեջն է գտնվում: Յերբ հոգին բաժանվում է մարմնից, մարդը մեռնում է: Մարմինն առանց հոգու ապրել չի կարող, նա քայքայվում է, իսկ հոգին՝ սկսում է նոր, հավիտենական կյանքով ապրել դրախտում կամ դժոճքում, նայելով, թե ինչպես է անցել մարդու յերկրավոր կյանքը:

Գիտությունը ցույց է տվել, թե մարմնից անջատվու՞յց մի հոգի չկա: Հնումը հոգին ասելով մարդիկ հասկանում էյին սկզբունքը, վոր ղեկավարում է կենդանի մարդուն: Այժմ մենք գիտենք, վոր մարդն իր բոլոր ընդունակություններով պարտական է վոչ թե հոգուն, այլ ուղեղին: Յեթե ուղեղի վորեւե մասը վնասենք, մարդու ընդունակություններից մեկնումեկը՝ կպակասի: Որինակ՝ յեթե վնասենք՝ այսպես կոչված, տեսողության «կենտրոնը», այսինքն ուղեղի այն մասը, վորը տեսնելու հնարավորություն է տալիս, այդ ղեպքում մարդը կորցնում է այդ ընդունակությունը, թեև նրա աչքերը վնասված չեն: Այնպես վոր հոգին չէ՛, վոր կառավարում է մարդու այս կամ այն ընդունակությունները, այլ՝ ուղեղը: Մեռնում է մարդը և նրա հետ միասին վոչնչանում են նրա բոլոր «հոգեկան» ունակությունները: Անմահ հոգին տգետ մարդու անիմաստ, մտացածին բան է: (Փլյորով. «Ի՞նչից է հոգին»):

Հ. 13. Ի՞նչ է հոգեհարցուկը՝ սպիրիտիզմը:

Պ. 13. Սպիրիտիզմը հիմնված է հոգու անմահության և անդրգերեզմանական արքայության հավատի վրա: Ըստ սպիրիտիզմի ուսմունքի՝ մարդկանցից վոմանք, առանձնապես շնորհալիներին (մեդիումներին) աջողում է «այն աշխարհից» կանչել մեռած մարդկանց հոգիներին:

Գիտությունը ապացուցել է, թե վոչ մի հոգի չկա: Սպիրիտիզմը կամ մեռած հոգիներին դուրս կանչելը, նրանց հետ զրուցելը և նման անհեղեղությունը կրոնական շլմեցումի մի այլադան տեսակն է հանդիսանում: Նրա պահպանությամբը շահագրգռված է բուրժուական մեռնող դասակարգը, վոր անդրգերեզմանական աշխարհի կարիքն է գզում, վորպեսպի մոռանա իր յերկրավոր տիրապետության անխուսափելի վախճանը:

Հ. 14. Ինչո՞ւ յերբեմն բժշկություններ են լինում սրբերի պատկերների առաջ կամ վանական աղբյուրների մոտ:

Պ. 14. Ներկայումս վորոչ հիվանդություններ (առավելապես ջղային հիվանդություններ) բժշկվում են բժշկի ներշնչումով: Ժամանակակից բժշկությունը ներշնչման համար ոգտվում է հիպնոսական դրությունից, այսինքն արհեստական ջնաբերությամբ, վորի մեջ ներշնչելությունը չափազանց բարձրանում է: Այսպես, պրոֆեսոր Բերնհեյմին՝ վորի տրամադրության տակ միայն մի քանի րոպե կար զնացքը մեկնելուց առաջ, աջողվել է հիպնոսել իրեն դիմող մի հիվանդ գեղջկուհու և բժշկել նրան ներշնչումով ձեռների իս-

անրիկական կծումից: Այն բարբ Կեպրեում, վարանդ բժշկությունը տեղի յե ունենում սրբերի պատկերների կամ նման առարկաների մոտ, մենք հիպնոսի հետ դործ ունենք: Այսպիսով, հիպնոսին վերաբերվող գիտությունը մերջ դրեց հրաշայի բժշկությունների հեքիաթին:

Հ. 15. Հնարավոր է յերիտասարդացնել ծերացած մարդուն:

Պ. 15. Հավատացյալներն ասում են, «աստված տվեց, աստվածն էլ հետ վերցրեց»: Այստեղից հետևում է, թե մարդուն վիճակված չէ յերկարացնել իր կյանքը, թեկուզ մի քանի ժամով, սակայն, վերջին ժամանակներս գիտնականները՝ հենվելով բազմաթիվ փորձերի վրա, գանազան միջոցներ գտան մարդկանց և կենդանիներին յերիտասարդացնելու համար: Այսպիսով, մարդու կյանքի տեփողությունը վորոշ դեպքերում կարող է յերկարանալ, հակառակ այն բանի, ինչ վոր կրոնն է ասում, թե մեր կյանքը կախված է «աստվածային կամքից»:

Հ. 16. Ինչո՞ւ որհնած սուրբ ջուրը շեշի մեջ չի փչանում:

Պ. 16. «Սուրբ» ջուրը փչանում է, ինչպես և ուրիշ ամեն տեսակ ջուր, յեթե յերկար ժամանակ մնա շեշի մեջ: Սակայն տերտերները փոխում են շեշի ջուրը և ջրմուղի պարզ ջուրը ներկայացնում վորպես սուրբ ջուր: Ջուրը փչացումից կարելի չէ պահպանել յեռացումով, վորով վորչնչանում են ջրի մեջն ապրող բակտերիաներն ու սունկեկները:

Հ. 17. Ինձի՞ց է ատաջ դալիս ծիածանը:

Պ. 17. Հավատացյալ մարդիկ կարծում են, վոր ծիածանը աստվածային նշան է, հաղորդում է, թե անձրևը կգադարի: Բայց մենք դիտենք, վոր ամեն անգամ ծիածան է ստացվում, յերբ արևի ճառագայթն անցնում է յեռագեհ ապակու (պրիզմայի) միջով: Արևվի ճառագայթի սպիտակ շողը՝ այդպիսի ապակու միջովն անցնելով, դառնում է յոթն գույնյան, ծիածանային: Անձրևի ժամանակ ոգի մեջ շատ թացություն, ջրային շատ կաթիլներ են լինում: Յեվ ասա, արևի ճառագայթը՝ նրանց միջովն անցնելով, բաժանվում է իր գույներին, ատաջ բերելով ծիածան: Աստվածային նշանն այստեղ դործ չունի:

Հ. 18. Ինչո՞ւ անձրև է դալիս:

Պ. 18. Աստվածաշնչի զրույցի հեղինակները պատկերացնում էին յերկինքը ինչ վոր մի տեսակ ապակե կախարչի նման, վոր շինված է յերկրի՝ ինչպես պատկերացնում էին, հարթության վրա և վորից անձրևի ժամանակ ջուրը թափվում է ներքև յերկնքի բացվածքից, ինչպես մաղի ծակոտիկներից: Սակայն, դիտությունը վաղուց և հաստատել, վոր անձրևները կադտությունը վաղուց և հաստատել, վոր անձրևները կադտությունում են այն շողիներից, վորոնք արևի ճառագայթմիջովն են այն շողիներից, վորոնք արևի ճառագայթմիջովն են այն շողիներից, վորոնք արևի ճառագայթմիջովն են այն շողիներից:

Հ. 19. Ի՞նչից են ատաջ դալիս փորսան ու կայծակը:

Պ. 19. Յեթե իրար մոտեցնենք յերկու գնդակ, վորոնցից մեկը յցված է դրական էլեկտրականությամբ, իսկ մյուսը բացասական էլեկտրականությամբ, այդ դեպքում ատաջ կգա ճալթուն և կայծ կերևա: Ամպ-

րոպի ժամանակ ամպերի մեջ շատ ելեկտրականութիւնն  
ե կուտակվում: Յեւ վաղտեղ ել առաջ ե գալիս այն, ինչ-  
վոր ելեկտրականութիւնը լցված գնդակներն իրար  
մոտեցնելիս: Յեւ վորովհետեւ ամպերի մեջ հսկայական  
քանակութիւնը ելեկտրականութիւնն կա, ուստի ճայ-  
թիւնի փոխարեն վորոտմունք ե լսվում, իսկ կայծի  
փոխարեն կայծակն ե ակոսում թուխպերը, ընդ սիմին՝  
կայծակի փայլակն ավելի վաղ ե տեսնվում, իսկ վո-  
րոտն ավելի ուշ ե լսվում, վորովհետեւ լույսի արա-  
գութիւնն ավելի մեծ ե, քան ճայնի արագութիւնը:  
Այսպիսով, Յեղիա մարգարեյի մասին յեղած առասպե-  
լը, թե նա ե առաջ բերում վորոտն ու կայծակը, տգի-  
տութիւնն արդիւնք ե:

Հ. 20. Ինչի՞ց ե առաջ գալիս յերկրաշարժը:

Պ. 20. Յեկեղեցական ուսմունքի համաձայն՝ յերկ-  
րաշարժները աստծու նշանահրաշներն են, աստվածա-  
յին պատահա՞մ մարդկանց մեղքերի համար: Տարո-  
րինակ ե միայն այն, վոր այդ պատուհասն աստված  
իրագործում ե միայն յերկրի վորոշ մասերի վրա:  
Յերկրաշարժները տեղի յեն ունենում համեմատարար  
յերկրազնդի փոքր մասի վրա՝ վորպէս գաղերի պայ-  
թիւնի հետեանք, վորոնց հաղթահարել չեն կարողա-  
նում նրանց վրա ընկած յերկրային շերտերը: Իսկ աստ-  
վածային պատուհասը տերտերները հնարել են նրա  
համար, վորպեսզի ժողովրդին հնազանդութիւնն ե  
մշտական յերկյուղի մեջ պահեն գոյութիւնն չունեցող  
աստծու հանդեպ:

Հ. 21. Աշխարհն սկիզբ ունեցե՞լ ե արդյոք ե վերջ  
կունե՞նա:

Y. S.  
38197-02  
ԿԵՐԷ  
17993

Պ. 21. Տիեզերքի մեջ անհամար քանակութիւնը  
աշխարհներ կան, յեթե միայն աշխարհ խոսքը հասկա-  
նանք արեգակնային համակարգութիւնն իմաստով  
(արեւ, յերկիր, մոլորակներ): Այդպիսի աշխարհների  
սկզբը ե վախճանի մասին մենք կարող ենք խոսել,  
վորովհետեւ գիտութիւնն ստուգել ե, վոր մեր արե-  
գակնային համակարգութիւնը ծագել ե բազմամիլի-  
արդ տարիներէից առաջ շիկացած դապից, վոր հավի-  
տենապէս գոյութիւն ուներ տիեզերքում: Յեթե մեր  
արեգակնային համակարգութիւնը սկիզբ ե ունեցել,  
ապա ուրեմն սպասելի յե ե նրա վախճանը: Այդ վախ-  
ճանը կարող ե տեղի ունենալ դանազան յեղանակներով:  
Սակայն, այդպիսի աշխարհի կործանումը ժամանակա-  
վոր կլինի: Կանցնեն միլիարդավոր տարիներ ե կործան-  
ված աշխարհից կծագի նորը:

Տիեզերքումը շրջելով՝ աշխարհները կարող են ի-  
րենց ճանապարհին հանդիպել ուրիշ աշխարհների: Այդ  
ժամանակ յերկու արեգակները իրար կձգեն, մինչեւ վոր  
բախվեն իրար այդ կատաղի պտույտի մեջ: Այդպէս են  
անընդհատ առաջ գալիս տիեզերքի մեջ համաշխարհա-  
յին սասանումները: Այդպէս ե աշխարհի կործանումը:  
Այդ խորտակված աշխարհները նորից միգածութիւն-  
ներ են դառնում ե այդպէս ե ընթանում նյութի հավի-  
տենական շրջապտույտը—միգածութիւնից դեպի արե-  
գակ, ե արեգակից՝ դեպի միգածութիւն: Այդպիսով՝  
ճիշտն ասած, աշխարհը վոչ սկիզբ ունի ե վոչ վախճան,  
այլ նա հավիտենապէս, անվերջ փոփոխվում ե (Բ. Լ.):

Հ. 22. Ի՞նչ ե ավետարանական առաւելելը աշխարհի  
վախճանի ե ահեղ դատարանի մասին



Պ. 22. Աշխարհի վախճանի և ասեղ դատաստանի մասին յեղած ավետարանական ուսմունքի արմատները թաղված են զանազան հին ժողովուրդների կրոնների մեջ, վորոնք վախենալով իրենց իսկ հնարած աստուծուց, սպասում էին թե «աշխարհի վախճանին» նա պետք է դատի մարդկանց, նրանց գործածած բոլոր «մեղքերի» համար: «Աշխարհի վախճանով» և «ասեղ դատաստանի» մասին յեղած սոսապելլը չարիարանյ ձեռնառ թվաց զանազան յեկեղեցիների սպասավորներին, վորովհետեւ միլիոնավոր հավատացյալների յերկյուղի և հնազանդութեան մեջ և պահում արող դասակարգի հանդեպ: Այն աշխարհում նրան են դատելու, ով իր կենդանութեան ժամանակ չէր յենթարկվում իշխանութեան ունեցողներին, ով ըմբոստանում էր, մասնակցում էր հեղափոխութեաններին, գործադուլներին և այլն:

Հ. 23. Մեռելներից հարութեան ատենլը հնարավոր է արդյոք:

Պ. 23. Մարդու մահվան ժամանակ նրա կենդանի նյութը քայքայվում է մանրեաների արդեցութեան տակ և վեր է ածվում մի շարք ավելի պարզ նյութերի: Այդպիսով, կենդանի մատերիան (նյութը), վորպէս այդպիսին, գոյութեանից դադարում է, նա վեր է ածվում մի այլ տեսակի մատերիայի, վոր նոր հատկութեաններ է ստանում, վորոնք բնորոշ են այդ նոր տեսակի մատերիային: Նյարդային հյուսվածքի քայքայման ժամանակ մահվանից հետո ինքնաբնական վոչընչանում են նաև այն հատկութեանները, վորոնք հասկանչական էին նրա համար, այսինքն՝ վոչնչանում

են այն հատկութեանները, վորոնք կոչվում են հոգեկան հատկութեաններ: Մահվանից հետո մարդը՝ վորպէս անձնավորութեան, վոչնչանում է, այն նյութը՝ վորից նա կառուցված էր, չի կորչում, այլ միայն որիչ ձև է ընդունում, ուրիշ հատկութեաններով, այդ նյութը մտնում է բնութեան ընդհանուր շրջապատելի մեջ և նրանից կառուցվում են թե կենդանի և թե անկենդան մարմիններ:

Հ. 24. Ինչո՞ւ հուշակավոր գիտնականներից վորմանք հալատում են աստծուն:

Պ. 24. Մարդկանց կրոնականութեանը այնքան կատուն չունի նրանց լուսամտութեանից, նրանց կըրթութեանից, մտավոր զարգացումից, վորքան նրանից՝ թե ի՞նչ դասակարգի յեն պատկանում նրանք: Յեւ յեթե մի մարդ պատկանում է շահագործողների դասակարգին, յեթե նա իր գոյութեան բոլոր պայմաններով կապված է այդ դասակարգի հետ, նա իր մոր կաթի հետն է ծծում այն գիտակցութեանը, թե անհնարին է վորեվէ կուտուրա ատանց կրոնի: Ինչո՞ւ այդ այդպէս է: Վորովհետև այն կուտուրան, վորի բարիքներից նա սովորել է ողավել, շահագործութեան վրա յե կառուցված, իսկ ինքը շահագործութեանը դժվար թե հնարավոր լիներ, յեթե կրոնը հաշտարարի և համաձայնեցնողի դեր չվերցնէր իր վրա դասակարգերի պայքարի մեջ, յեթե նա իրեն համար կոչում չընդունէր շահագործվողներին սպայուցել, թե անհրաժեշտ է վոր նրանք կամովին տանեն բոլոր այն նշավակութեաններն ու ճնշումները, վորոնց յեթարկում են նրանց շահագործողները: («Բեգբոճիկ» լրագիրը): Հասականայի յե, վոր այն գիտ-

նականները, վորոնք սերա կերպով կապված են բուր-  
ժուական հասարակութայն հետ, յերբեմն պահպա-  
նում են իրենց կրօնականութունը (Ոմբ.) :

Հ. 25. Կրօնն ու գիտությունը համատեղելի՞ յեն  
արդյոք :

Պ. 25. Կրօնը ժխտում է մարդկային փորձը, չվըս-  
տահանալով մարդկային զգացմունքներին, յենթադրե-  
լով, վոր մարդկանց զգացմունքները կարող են խաբել  
նրանց : Իսկ ինչ վերաբերում է գիտությանը, նա վո-  
չընչի կուրորեն չի վստահում և ամեն ինչ փորձով ստու-  
գում է : Այստեղից յերեվում է, թե հավատն ու գի-  
տությունը չեն կարող համատեղելի լինել : («Բեզբոտ-  
նիկ» լրագիր) :

## II. ԿՐՈՆԱԿԱՆ ՀՍՎԱՑԱԼԻՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

Հ. 26. Ի՞նչ է կրօնը :

Պ. 26. Ամեն մի կրօն հիմնվում է գերբնական ույ-  
ժերի (վոզինների, աստվածների, աստանանների և այլն)  
հավատքի և յերկրպագության վրա : Կրօնի եյական մո-  
մենտը հանդիսանում է կախման գիտակցությունը, յեր-  
կյուղը, հնազանդությունը իր առձուռն (կամ աստ-  
վածների) : Հավատացյալի մեջ միանում է իր տկա-  
րությունը, կախման զգացմունքը գերյերկրային բարձ-  
րագույն ուժից այն հույսերի հետ, թե աստված նրան  
չի թողնի, կողնի, յեթե հավատացյալ հնազանդ լինի  
աստձուռն (կամ աստվածների) և կանի այն, ինչ վոր  
հավատացյալին ցանկալի յե (Լուկաչևսկի) :

Հ. 27. Յեղե՞լ է արդյոք մի ժամանակ, յերբ մար-  
դը զեռ չի ունեցել վոչ մի կրօնական պատկերացում :

Պ. 27. Մարդու հին նախահայրերը, վորոնք հապիվ  
բաժանված են յեղել կենդանական աշխարհից, աստձու-  
հավատը չեն ունեցել : Վարելով դրեթե անասնական գո-  
յություն, մարդիկ մտածում էյին միայն ամենամերձա-  
վոր առարկաների մասին : Ուստի և իրենց յերկրային  
գոյության առաջին ժամանակներում մարդիկ վոչ մի  
հավատալիք չեն ունեցել :

Հ. 28. Ինչպե՞ս է ծագել հոգու հավատը :

Պ. 28. Նախնական մարդը տարբերություն չէր  
տեսնում մարդու մահվան և ժամանակավոր ուշա-  
թափ դրության, մեռածի և հիվանդի միջև : Միայն  
աշխատանքային փորձի աճմանը զուգընթաց մարդն  
սկսում է պատճառական կապ գտնել իրեն շրջապա-  
տող յերեվույթների մեջ : Նա սկսում է զանազանել  
իրական նյութական աշխարհը ֆանտաստիկականից,  
անիրականից : Մարդը հնարում է և ոգտվում աշխա-  
տանքի գործիքներից : Նա տեսնում է, վոր՝ որինակ,  
ձեռք առած փայտը ըստ ցանկության շարժման մեջ է  
դրվում : Սակայն, հենց վոր ձեռքը հետ է քաշում դոր-  
ծիքից, նա անշարժ ընկնում է : Վայրենու մեջ այն միտ-  
քըն է ծագում, թե մարդու մեջն էլ ապրում է մի ինչ  
վոր առանձին, խորհրդավոր եյակ, վորը մարմինը շար-  
ժողության մեջ է դնում և կառավարում է նրան, ինչ-  
պես վոր մարդը աշխատանքի դործիքն է կառավա-  
րում : Այդ եյակին նա հողի անունը տվեց, վորը կա-  
րող է ժամանակավորապես կամ յերկար ժամանակ,  
ընդմիջտ թողնել իր մարմնական պատյանը—մարմինը :  
Յերազատեսությունները, վորոնց ժամանակ հոգին հե-  
ռանում և դարթնելու ժամանակ նորից վերգառնում է

մարդու մարմնի մեջ, ե՛լ ավելի համոզում են նրան, թե հնարավոր է, վոր մարմնից անջատ «հոգի» գոյություն ունենա: Յերբ «հոգին» ընդմիջտ» է հեռանում, ուրեմն մարդը մեռավ:

Հ. 29. Ինչպե՞ս է ծագել ննջեցյալների պաշտամունքը:

Պ. 29. Մարմինը թողած հոգուն՝ վայրենին սկսեց անվանել վոգի: Նրա կարծիքով, վոգին նույնպես ուտելիքի և խմելիքի կարիք է զգում, նա նույնպես կարող է քաղց զգալ, բարկանալ, զայրանալ, գեթադղություն պատճառել և՛ ընդհակառակը, գոհ լինել, ոգնություն ցույց տալ, աջակցել, բարերար հանդիսանալ: Բարյացակամ են համարվում միայն ամենամոտ ազգականների կամ գոնե իր սեփական ընտանիքի անդամների վոգիները: Բարի վոգիներին պետք է կերակրել, խմցնել, չոյել, վորովհետև միայն այդպիսի պայմաններում նրանք կարող են բավարարել իրենց ազգականների ցանկությունները: Հանգուցյալներին մատուցվող այդհարգանքը կոչվում է վոգիների պաշտամունք:

Հ. 30. Ինչպե՞ս է ծագել գոհարբությունը:

Պ. 30. Ննջեցյալների պաշտամունքից են ծագել գոհարբությունները: Ննջեցյալների ազգականները մեռածի հոգուն ուտելիք և խմելիք են թողնում, յենթադրելով, վոր հոգին նույն այդ կերակուրն է ուղում: Զոհերը մատուցվում են դեթադղությունը կասեցնելու նպատակով, վորը հետևանք է համարվում մեռելների զայրույթի, իսկ մյուս կողմից՝ մեռած մարդու վոգին գրավել կենդանիներին ոգնելու, ապրուստի միջոցները հեշտությամբ հայթայթելու գործում: Զոհարբու-

թյունների հետևվանքը շատ ժողովուրդների կրոնների մեջ պահպանվել են նույնիսկ մինչև՛ այժմ:

Հավատացյալներից շատերը՝ յերբ վորելիցե մեկին հիշատակում են, «հատիկ» են յեփում (բրնձի խյուս մեղրով): Այդ հատիկը կանխորոշվում է նրա համար, ում վոր հիշատակում են: Հանգուցյալի գերեզմանի վրա ձվով վողջադուրվելը հանուն քրիստոսի, «հիշատակի ճաշերը» — քելեխը, Բելոուսական՝ ննջեցյալներին կերակրելու տոնը—«Զյաձի» և այլն ննջեցյալների նույն պաշտամունքի մնացորդներին են վերաբերում:

Հ. 31.—Ի՞նչպես է ծագել պասը:

Պ. 31.—Պասերի ծագումը պետք է վորոնել այն արգելքների մեջ, վոր դրվում էլին կերակուրի վորոշ տեսակների վրա: Ժամանակի վորոշ շրջանում, յերբ բազմանում են անասունները կամ հասունանում պատուհները, անհրաժեշտ է համարվել նախապես պահպանել նրանց փչացումից: Այդ նպատակին հասնելու համար՝ բույսերի և կենդանիների մի քանի տեսակների վրա արգելք էր դրվում (տաբու): Յերկրագործական տնտեսության մեջ պասերը ժամանակի նշանակություն ստացան՝ ուտելիքի պաշարեղենները կուտակելու համար դաշտային կամ տնային ուժեղ աշխատանքների ժամկետերից առաջ—հերկելու, խոհարարի և հացքաղի, անասունների ձմրան մորթվածքի (խմբ.): Հետագայում պասը սրբագործվել է կրոնով, վորպես աստվածահաճո գործ (Լոգիսով):

Հ. 32. Ի՞նչ է անիմիզմը:

Պ. 32. Վոգիների նախնական հավատալիքը, վորոնք մարմնանում էլին մարդուն շրջապատող բոլոր առարկաների և յերեվույթների մեջ, կոչվում է անի-

միզմ: Նախնական մարդու աշքում ամբողջ բնությունը կենդանի յե յեղել և հողիացած: Այս հողի վրա յել առաջ և դալիս քարերի, բույսերի, կենդանիների և բնության ուժերի պաշտամունքը:

Հ. 33. Ի՞նչ և Ֆեախչիզմը:

Պ. 33: Մի շարք առարկաներ, վորոնց մեջ ապրում և վորին կամ վորոնք վորուց ստացել են վորեկ առանձին կախարդական հատկութուն, ընդունվել և կոչել Ֆեախչ, իսկ Ֆեախչների պաշտամունքը—Ֆեախչիզմ: Մասունքները և հրաշագործ գառկերների պաշտամունքը քրիստոնեյության մեջ միեւնոյն Ֆեախչիզմն և հանդիսանում:

Հ. 34. Ի՞նչպես են առաջ յեկել քրմերը:

Պ. 34. Սկզբներում վորդիների մասին հոգում երբնասնիքի ավագը (գլխավորը): Հետագայում՝ յերբ փոքրիկ խմբերը, վորով ապրում էյին նախնական մարդիկ, սկսեցին խոշորանալ, ընտանիքի ավագն այլևս ժամանակ չունեք, թե բոլորին կառավարելու և թե միաժամանակ վորդիներով պարզվելու: Առաջ և դալիս հայելյալ մթերք, վոր հնարավորություն և տալիս մի մարդ պահել, վորը մթերքի անմիջական արտադրությամբ չի պարզվում: Առաջ և դալիս քրմերի դասակարգը, վոր «լափում և» հավատացյալների կողմից վորդիների ոգտին բերվող նվերների («գոհք») նշանակալից մասը:

Հ. 35. Ինչպե՞ս և ծագել նախնիքների պաշտամունքը:

Պ. 35. Նախնիքների պաշտամունքը կապված է նախնական մարդու տնտեսության բարդացման հետ: Տեխնիկայի զարգացմանը և աշխատանքի բաժան-

մանը զուգընթաց՝ սրգայի աշխատանքների և նրա տոանձին անդամների գործունեյության ընդհանուր գեկավարության պահանջն և զգացվում: Այդ ժամանակ՝ տեխնիկայի զարգացման չնորհիվ, մարդկային աշխատանքը առաջին անգամ ստեղծում և հայելյալ արտադրանք (ավելյուկ): Հասարակությունը չերտավորվում է՝ յերեվան են դալիս գեկավարների, կազմակերպիչների պատկարոկը, վորոնք իրենց աշխատանքի համար ստանում են հասարակական արտադրանքի վորոշ մասը, սրգայի մյուս անդամները կազմում են կազմակերպիչների ցուցումներն անպայմանորեն կատարող գոտակարգ: Կազմակերպողները («գլխավորները») հանդիսանում էյին դիտության և աշխատանքային փորձի առաջնորդներ, նրանք մեռցնելուց հետո յել շարունակում էյին մնալ նույնը սերունդների գլխակցության մեջ: Սերունդը խտորեն պահպանում էր իր մեծի կամ առաջնորդի, նախնու պատվերներն ու ավանդները: Համայնքի հիշողությունների կազմակերպիչների հողինքը առանձնապես շոկնվում են շարքային մեռելների հողիների շարքից: Ժամանակի ընթացքում կազմակերպիչ-նախնիների պատկերներն աճում են հետնորդների գլխակցության մեջ, գերբնական չափերի հասնելով: Նրանց համդեպ տաժած հարգանքը վեր և ամվում իսկական ստոյաժացման (Բողոհանով):

Հ. 36. Ի՞նչ և տոտեմիզմը:

Պ. 36. Նախնական մարդը հաճախ մարդկանց նախնիք և ընդունում կենդանիներին, բույսերը, յերբեմն ևլ նաև բնության վորեկ յերեվույթ: Այդ նախնի-սրբազան էյակը—կենդանու կամ բույսի վորեկ տեսակը, կոչվում

և տոտեմ: Նրա անդամներն իրենց նրա անունով են կոչում—«Ոճի մարդիկ», «կենդուրուլի մարդիկ», «արեվի փայլի մարդիկ» և այլն: Նրա պատկերը ներկույն նրկարվում է մարմնի վրա (այստեղից՝ դաճելու—տատուի բույսի սովորութունը վայրենիների մեջ): Տոտեմի կյանքը պաշտպանվում է արգելքով (տարու): Յերբեմն միայն սովյալ տոտեմի մարդիկ «հաղորդվում են» կամ հատուկ ծեսերով ճաշակում են իրենց գազանային նախածնողների միսը: Յենթաբերվում է, վոր տոտեմի միսն ուտելիս՝ նրա մասի հետ միասին նրա հոգեկան հատկութուններն էլ անցնում են ուտողին: գերմանական գիտնական կոննովը հետեվյալ կերպով է բացատրում տոտեմի դժգուհը. «Միասին ապրող մի խումբ ազգականների մեջ արգելվում էր սղամարդկան ու կանանց ամուսնանալ իրար հետ: Սակայն որդաների (կամ խմբերի) միջևին էլ վերջվիբերջո կարող են նույնպես ազգակցական հարաբերութուններ սահմանվել: Այդպիսի դեպքում ամուսնական կապերը նրանց անդամների միջև վոր նույնպես արգելքի տակ են դրվում: Վորպեսզի ամեն վոր հեշտությամբ կարողանար խմբերի (ցեղերի) հարաբերութունն իմանալ, հետզհետե սովորութուն դարձավ մի որդային (կամ խմբի) բոլոր անդամներին մի վորեյե ընդհանուր անունով կոչել: Անունները՝ ըստ որդաների բնակության տեղի, այդ նպատակին հարմար չէին. այդտեղում կարող էին բնակվել նաև իրար հետ ազգականութուն չունեցող որդաներ: Յեվ ահա սկսեցին ավելի ու ավելի գործածական դառնալ այսպիսի նշանակումներ՝ «կարմիր կավաքարի մարդիկ», «ոճի մարդիկ», և այլն: Այդ անվանումների մեջ առանձնապես բազմաթիվ էին կենդանիների անունները: Այդպես էլ պետք

է լիներ, վորովհետեվ նախնական մարդը, վոր պլսավորպես պարապում էր վորսորդությամբ, առանձնապես հաճախ էր գործ ունենում կենդանիների հետ:

— «Արծվի մարդիկ» արենակից ազգականներ էին համարվում և արծիվը նրանց տոտեմն էր: Աստիճանաբար մի շարք սերունդների մեջ այդ անվանումներն այն համոզմունքն առաջ բերին, թե «արծվի մարդիկը» արծիվից են սերվել, «ոճի մարդիկը»՝ ոճից և այլն: Այլապես ասած՝ տոտեմային կենդանիների վրա սկսեցին նայել վորպես սովյալ խմբի կամ ամբողջ խմբերի ցեղապետների վրա և շատ դեպքերում սկսեցին նրանց էլ նույն հարգանքները մատուցանել, ինչ վոր մատուցանում էին նախահայրերին»:

Ասովածաշնի մեջ այդպիսի ասոված—տոտեմ է հանդիսանում վոսկե հորթը, վոր քրմապետ Ահարոնը ձուլեց Իսրայելի ժողովրդի պահանջով: Հրեյաներն ունեյին նաև ուրիշ տոտեմներ (Խ.):

Հ. 37. Ի՞նչպես է ծագել պատկերացումը դժոխքի և դրախտի մասին.

Պ. 37. Յեր մարդկային հասարկութունը բաժանվում է առաջնորդների—կազմակերպիչների—փոքրիկ խմբի և ավելի ընդարձակ խմբի—չահաղորդվողների, այդ ժամանակ էլ հրապարակ և գալիս պատկերացումը դրախտի և դժոխքի մասին: Դրախտը—յերկնային յերկիրն է, լույս ու կանաչով լի, ուր գնում են մեռած առաջնորդների հոգիները: Դժոխքը—այդ ընդյերիլյա մռայլ թագավորութունն է, ուր նետվում են անարժան, չահաղորդվող ստրուկները: Քրիստոնեյական յեկեղեցին ուսուցանում է, թե մարդ կարող է ամենասարսափելի մեղքերը գործել և դրա հետ միասին

ազատվել դժոխային տանջանքներից, յեթե զոհարե-  
բություններ անի, այսինքն՝ նվերներ տա յեկեղեցւոյն :  
Այսպիսով աստծուն կաշառելով, կարելի յի փրկվել  
գեհենի կրակից : Աղքատին, իհարկե, ուրիշ բան չի  
մնում, յեթե վոչ գոհանալ միայն դժոխքով, վորովհե-  
տեով չկա մեկը, վոր նրա փոխարեն նվերներ մատու-  
ցանի քրիստոնէյական աստծուն :

Հ. 38. Ի՞նչպէս ե ծագել բնապաշտությունը .

Պ. 38. Վրդինների նախնական պաշտամունքից ա-  
ռաջ ե գալիս նախնիքների պաշտամունքը, իսկ վերջե-  
նից՝ իր հերթին, «բնության պաշտամունքը» : Բնու-  
թյան պաշտամունքը համեմատաբար ավելի ուշ ժա-  
մանակներումն ե ծագում, յերբ տվյալ ցեղը նստակ-  
յաց կյանքին ե անցնում և սկսում ե յերկրագործու-  
թյամբ պարապել : Յեվ վորովհետեւ յերկրագործու-  
թյամբ պարապելիս կյանքի միջոցների հայթայթումն  
ստավերապես կախված ե բնության ուժերից, ուստի  
աստված-նախնիքների գլխավոր պարտականությունն և  
դառնում հոգալ յերկրի պտղաբերությունը բարձրացնե-  
լու մասին, դաշտերին ու արտերին արեւի լույս, ջեր-  
մություն և խոնավություն մատակարարելու մասին :  
Այդ ժամանակից յերկրագործը հարկադրում ե իր  
աստվածներից յերկրագործության համար մասնա-  
գետներ դառնալ : Այժմ արդեն մարդիկ աղոթում են  
արեւին, լուսին, աստղերին : Յերկիրը մարդու հա-  
մար սնուցող «մայր» ե դառնում :

«Աստված-նախնիքն» աստիճանաբար սկսում են  
նույնանալ արեւի հետ, բնության տարերային ուժերին  
իրենց հետնորդ սերունդների պահանջներին հարմար  
ուղղություն տալով : (Ստեպանով) :

Պ. 39. Հետզհետե տոհմական խմբերը միանում և  
դառնում են ցեղեր : Տոհմերի միացումով մեկ ցեղի  
մեջ, տիրող ցեղի գլխավոր աստվածն սկսում ե ճա-  
նաչվել ցեղի մեջ մտնող բոլոր տոհմերի գլխավոր աստ-  
ված : «Նա այժմ հայտարարվում ե վորպէս նախա-  
հայր, այսինքն՝ միացյալ խմբերի բոլոր աստվածների,  
վրդինների, հովանավոր-նախնիքների հայր—դառնում ե  
ցեղի գլխավոր աստվածությունը, մինչդեռ հին աստ-  
վածները, տոհմերի հովանավորները դառնում են 2-րդ  
և 3-րդ կարգի աստվածներ և ընդունում են կիսաստ-  
վածների կամ հերոսների անուն» : (Ստեպանով) :

Հ. 40. Ի՞նչպէս ե կատարվել անցումը բազմաստ-  
վածությունից դեպի միաստվածություն :

Պ. 40. Փոխանակային հարաբերությունների դար-  
գացման համաչափությամբ՝ տեղի յի ունենում ցեղե-  
րի միացումը : Հին պետության հիմքերն ե դրվում :  
Իրա հետ միասին տիրող ցեղի աստվածը դառնում ե  
պետության գլխավոր աստվածություն : «Այդ ժամա-  
նակ՝ ինչպէս վոր ցեղային իշխանները, մանր թագա-  
վորները և սպարապետները հետին պլանի վրա յեն անց-  
նում մեն-միակ ինքնակալ ցարի հանդեպ, այդպէս ել  
հետին պլանի վրա յե անցնում տոհմային և ցեղային  
աստվածների իշխանությունը յերկելի և աներկելի  
աշխարհի, յերկնքի, յերկրի և ամբողջ տիեզերքի  
կառավարչի և ամենակալի, յերկնավոր Ֆեն-մենակ  
թագավոր-արարչի իշխանության հանդեպ» : (Լո-  
գինով) :

Հ. 41. Ի՞նչպէս ե անդրադարձել կրոնների վրա  
մաքդկային հասարակության կաղմակերպումը :

Հ. 39. Ի՞նչպէս են ծագել ցեղային աստվածները :

Պ. 41. «Կրօնը կերպարանափոխվում է տնտեսութեան ձևերի փոփոխման, ապրուստի միջոցների հայթհայթման յեղանակների փոփոխման կապակցութեամբ: Այսպես արիական Ինդերա աստվածը, վոր տրիտուս ցեղի աստվածն էր, դառնում է պատերազմի աստված, ապա՝ վորսի և պատերազմի ահեղ աստված լինելուց հետո՝ (վորսորդական կենցաղ) դառնում է անասնապահների արոտավայրերին ամպերից անձրեկ ուղարկող շանթարձակ աստված (անասնապահական կենցաղ) . ապա՝ անասնապահական աստծուց դառնում է յերկրագործներին յերկրի պտղաբերութուն տվող, նրանց բերք վարառաքող արեւլ աստված (յերկրագործութեան զարգացման հետ) . Ինդերան դուրջացիական արեւլ աստծուց դառնում է շահագործական, արիստոկրատական (խոշոր յերկրագործների դասակարգային շահերը պաշտպանող), թագավոր-աստված Բրիգասպատի (դասակարգային և շահագործութեան յերեւման դալու հետ) և նրանից ել դառնում է Բրամա, վորի գլխից և դուրս յեկեւ բարձր քրմերի դասը (Բրամիններ), ձևերից՝ գինւորականութուն, իսկ վրոքերից դուրս են յեկեւ շահագործվող պարիսները սուգրինները—սարուկները): (Սուխոպլյույեվի՝ «կրօնական համատարիքների ծագումը», էջ 66):

Հ. 42. Ինչո՞վ էր արտահայտվում անասնապահ ցեղերի յերկրպագութունը բնութեան ուժերին:

Պ. 42. Անասնապահները յերկրպագում էին բնութեան ուժերին, վորոնցից կախված էր արոտավայրերի պարարտութունը, անասունների առողջութունը, նրանց բազմացումը:

Հ. 43. Ի՞նչով էր արտահայտվում յերկրագործ ցեղերի յերկրպագութունը բնութեան ուժերին:

Պ. 43. Յերկրպագործ ցեղերը յերկրպագում էին այն ուժերին, վորոնք ազդում էին բերքի վրա:

Հ. 44. Ինչպե՞ս է ծագել սուրբերի պաշտամունքը:

Պ. 44. Բնութեան ուժերի յերկրպագութունը կապված էր նախնիների պաշտամունքի հետ: Սկզբնական շրջանում բնութեան ամեն մի յերեվույթն ունեւ իր հատուկ աստված-նախնին: Կար խոնավութեան վարառաքող հողմերի աստված. հողի, պտղաբերութեան աստված և այլն: Նրանցից ամեն մեկը կառավարում էր վորեւ մեկ ուժ, վորից կախումն ունեւ մարդը: Այդ յերկրագործութեան մնացորդը դեռ դոյութուն ունի և այժմ սրբերի քրիստոնեյական պաշտամունքի մեջ: Կյանքի ամեն մի ղեպքի համար կա առանձին սուրբ—հովանավոր վորը հին հեթանոսական աստվածների աղգականն է հանդիսանում: Որինակ՝ աստվածների հովանավոր սուրբ Վլասիոսը ուրիշ բան չէ, բայց յեթե հին հեթանոսական վեւեա աստվածը, վորը պաշտվում էր վորպէս «անամային աստված»:

Հ. 45. Ի՞նչպէս է ծագել սատանայի համարը:

Պ. 45. Բոլոր կրօնների մեջ բարի վրդիների կողքին (քրիստոնեյութեան մեջ՝ հրեշտակների) հանդիպում ենք չար վրդիների (անմաքուր ուժի, սատանի, դեվի): Տիրող յեկեղեցին՝ վորին վեճակվել էր հեթանոսների հողինըրը նվաճել, տեսնելով վոր հեթանոսական տեղական սատանայութեան դեմ պայքարելը վոր մի արդյունք չի տալիս, ստիպվել և ճանաչել նրա դոյութունը, ստեղծելով «անմաքուր ուժի» էր քրիստոնեյական ժողովածուն—կալեկցիան:

Հ. 46. Ի՞նչ և ուսուցանում աստվածաշունչը:

Պ. 46. Տերտերների կարծիքով՝ աստվածաշունչը սուրբ գիրք է, վորը գրված է նույն ինքն աստծու թե-

լազրութեամբ: Մինչդեռ իրօք դանազան հեղինակներ են կազմել այն՝ շատ դարերի ընթացքում, հոգուտ դասակարգային հասարակութեան պահպանման և ուժարդման:

Այսպես կոչված «Մովսիսական որենսդրութիւնը» հիմնականում ճորտատիրական ընույթ է կրում: «Ամեն որենք ընդգծվում է՝ որենքներից վումանք հարուստների համար, մյուսները՝ ստրուկների համար: Աստվածաշունչը նվիրագործում է ճորտատիրական կենցաղը: Նա ամրապնդում է հոգեվորականութեան իշխանութիւնը: Յեւ վորովհետեւ հրեայական խմբերը վախենում էին ուրիշ կրօնների խմբերի մրցակցութիւնից, ուստի և Մովսեսի որենսդրութիւնը ամենից առաջ մահւման պատժով է սպառնում այն բոլորին, վորոնք ուրիշ աստվածների կերկրպագեն: Աստվածաշունչը ստակալի անհանդուրժութեամբ և տողորված դեպի ոտար հավատալիքը: Նա մահւման պատժ է պահանջում նրանց համար, ովքեր ցանկութիւն կունենան ուրիշ աստվածների կերկրպագել, բացի հրեայական աստվածներից: Այսպես և «աստվածահայտնութեան» գրքի ուսմունքը»: (Յարտալիսկի):

Հ. 47. Ի՞նչ է ուսուցանում թալմուդը.

Պ. 47. Թալմուդը պատկանում է հրեայական կրօնի սրբազան գրքերի թվին: Ուրիշ կրօնների սրբազան գրքերի նման՝ թալմուդը զովաբանում է աշխատավորների այն առաքինութիւնները, վորոնց շնորհիվ անխախտ է մնում ճնշման, աղքատութեան և շահագործման վրա հիմնված հասարակութիւնը: Ճնշված դասակարգերին թալմուդը հանձնարարում է հեղութիւն, խոնարհութիւն, նաղանդութիւն թաղավորներին և ընդհանրապես իշխանութիւն ունեցողներին: Թալ-

մուքն աստիճանով անհանդուրժում է հասարակութեան բաժանումը աղքատների և հարուստների, ճնշվածների և ճնշողների: «Աղքատութիւնը՝ ասում է թալմուդը, առ է դալիս Բարայիլի ժողովրդի դեմքին, վորջան կարմիր ձիասարքը ասիտակ նժույզին»: «Աղքատութիւնը, ասում է մի ուրիշ տեղում, դժվար թէ վերջանա նույնիսկ Մեսիայի գալուց հետո» (Շարք 15 բ):

Թալմուդն արդարացիում է ստրկութիւնը:

Ըստ թալմուդի՝ ստրուկն իրավունք չունի իրեն վկա հանդես գալու, սեփականութիւն ունենալու, վորովհետեւ նա մարդ չէ, այլ՝ ստրուկ: Բոլոր ճնշված շահագործվող մասսաներին թալմուդը՝ մյուս կրօնների սրբազան գրքերի նման, մեծահոգութեամբ խոստանում է հավիտենական յերանութիւն անդրջրիմյան թաղավորութեան մեջ՝ իրենի վարձատրութիւն յերկրի վրա կրած տանջանքների փոխարեն: Ահա թէ ինչ է ուսուցանում «իմաստնագույն գրքերից իմաստնագույնը»:

Հ. 48. Ի՞նչ բանի շնորհիվ է, վոր այս կամ այն հասարակութեան մեջ կրօնը պահպանվում է:

Պ. 48. Կրօնի արմատները վոչ այնքան բնութեան անըմբռնելի ուժերից վախենալու զգացմունքի մեջ են, վորջան նրանցից ճորտային կախումն ունենալու և հասարակական վորոշ հարաբերութիւնների մեջ: Նա, ով զգում է իր տկարութիւնը, ով դիտակցում է իր անզորութիւնը, նա ահամայից հանձնվում է մի ուրիշ, իրեն համար անխմանալի ուժի պաշտպանութեան: Իայց մարդու անզորութիւնը՝ բնութեան տարերային ուժերի դեմ մղվող պայքարում, յերեկութեան է, վաղ թէ

ուշ մարդը կազմակերպվելով, քայլ առ քայլ սկսում է յենթարկել իրեն թնությունը: Ընչա սխալեա ել զխոջ թե ուշ մարդկութան շահագործվող մտոր անխառնագիտութեան հաղթանակ կտանի նաև կապիտալի ատերերային ուժերի վրա: Սակայն, քանի ղեռ մարդը կազմակերպուի մեծ հաղթանակ չի տարել մի սոցիալական ուժի վրա, նա հավատում է աստծուն, վորը նրան յերջանկություն կշնորհի, յեթե վոչ այստեղ՝ յերկրի վրա, դեթ անդրջիջիմյան թաղավորության մեջ: Այսպիսով, կրոնը պահպանվում է շնորհիվ այն հանգամանքի, վոր շահագործվող մասսաները դեռ չեն դիտակցում, իրենց վորպես ուժ, վոր ընդունակ է վերջ դնել մարդուն մարդով շահագործելու հիման վրա գոյություն ունեցող հասարակությանը: (Լոզինով):

Հ. 49. Ընչա է, վոր կրոնը մի սանձ է, վոր դազում է մարդկանց՝ հանցագործություններ կատարելուց:

Պ. 49. Խորապես սխալ է այն կարծիքը, ըստ վորի՝ իբր թե կրոնն արգելադրում է մարդկանց և նրապատում հանցագործության պակասելուն: Եստ դարերի տեվոդության մեջ կրոնը արգելի չուտ հանցագործության դարգացմանը նպաստող մի Փակտոր է հանդիսացել: Այդ բանը հաստատում է փաստերի մի ամբողջ շարան: Այսպես՝ կրոնական տաները այնպիսի որեր են հանդիսանում, յերբ հարբեցողությունը, տուրուծեծը և ամեն տեսակի հանցագործությունները՝ ըստ վիճակագրության, սահմանային թվին են հասնում: Հորեվորականության մեջ զանազան տեսակի հանցագործություններն են ծաղկում: Գրեյսպետն հանցագործների մեջ հովառացյալների ասկեսը չարիտանց մեծ է: Սովորաբար հրամանատարական դասա-

կարգերի ներկայացուցիչները, վորոնք կապիտալի արյունոտ քաղաքականություն են վարում, կրոնական և աղոթասեր մարդիկ են: Իսկ կրոնականության անկումը՝ ըստ ընկեր Շեյնմանի իրավացի նկատողության, «վոչ միայն չի տանում դեպի հանցագործության մեծացումը, այլ՝ ընդհակառակը, նպաստում է նրա պակասեցմանը»:

Հ. 50. Ինչո՞ւ կրոնը «հոգևոր ցքի» (ողու) մի տեսակն է:

Պ. 50. Նախ՝ կրոնը զրկում է մարդուն ճիշտ պատկերացումներ ունենալուց աշխարհի մասին, նրանց վոխարեն տալով նրան մտացածին, սուտ պատկերացումներ և այդ բանը մարդու համար շատ վնասակար է: Յերբորդը՝ կրոնը յերջանկության ուրվականն է տալիս մարդուն և դրանով էլ խորտակում է նրա կամքը, նրա ցանկությունը՝ պայքարել իսկական յերջանկության համար: Յերբորդը՝ կրոնը վարժեցնում է մարդուն համբերել, յենթարկվել շահագործողներին կամքին, նրա մեջ ստրկական, ստրկացնող դրացմունքներ է կրթում: Չորբորդը՝ կրոնը խանդարում է մարդուն ապրել, կրթելով նրանում հիասթափություն՝ մարդկային բանականության հզորության հանդեպ, կրթելով նրա մեջ անզորության դիտակցություն աստծու հանդեպ և սեփական անոգնականության դիտակցություն (Էն. 1.):

### III. ԳՐԻՍՏՈՆԵՅՈՒԹՅԱՆ ԿՍԳՈՒՄԸ

Հ. 51. Կարելի՞ յե ողբվել Հին կտակարանի զբերից (տասնամեջն չից) վորպես պատմական աղբյուրից:

9. 51. Աստվածաշունչը կազմվել է հեռուհեռու շատ դարերի ընթացքում, բաղմատեօակ առասպելներից և դրույցներից, վոր պտտվել են ժողովրդի մեջ: Մովսեսը, վորին վերադրում են հնգամատյանի (Ծննդոց, Յեւրեյ, Ղևտացոց, Թվոց և յերկրորդ Որինաց գրքերի) կազմումը, ինչպես ապացուցել են արդի գիտնականները, յերբեք գոյություն չեն ունեցել: Մովսես անունը նշանակում է որենսդիր և այդպիսի որենսդիրներ գոյություն ունեցել են բոլոր հին ժողովուրդների մեջ և կոչվել են նույնիսկ շատ նման անուններով: Հնդկաստանում յեղել է որենսդիր Մանու, Հունաստանում՝ Մինոս, Յեզիպտոսում՝ Մենու և այլն: Ինչպես ապացուցել է գիտնական Հովարդ Ողբուղը՝ աստվածաշնչում առնվաղն 10 հազար տեղ կա, վորոնց կարելի յե բացատրել ամենաբաղմազան ձևվերով: Պարզ է, թե այդպիսի գիրքը չի կարող վորպես պատմական աղբյուր ծառայել:

2. 52. Քրիստոսի մասին վկայություններ կա՞ն հին կտակարանում:

Պ. 52. Մաթեոսի ավետարանի առաջին գլխում պատմվում է, թե յերբ վոր Հովսեփն անապատելիորեն նկատեց իր մատաղահաս կնոջ հղությունը, վճռեց արձակել նրան: Յերազում նրան յերեվացող հրեշտակն իբր թե ասաց նրան, վոր չվնդի իր կնոջը, վորովհետև նա սուրբ հոգուց է հղացել: «Այլ այս ամենայն յեղև զի ցցե վոր ասացալն ի տյառնե ի ձեռն Յեսայի մարգարեյի»։ Ահա կույս հղացքի և ծնցի վորդի և կոչեցին զանուն նորա Եմանուել, վոր թարգմանի՝ ընդ մեզ աստված»։ Այս գարձվածքը բանվում է Յե.

ույի մարգարեյի գրքում (գլ. 7-րդ համար 14), բայց այդ ասված է ուրիշ առիթով: Հավատացյալների նայելու կողմ կերպով խաբելու միջոց է հանդիսանում նաև հին կտակարանի մյուս մարգարեյություններից վկայություն բերելը:

2. 53. Ի՞նչ վկայություններ կան Քրիստոսի մասին վ՛րջ--քրիստոնյական աղբյուրի մեջ:

Պ. 53. Հեթանոսական և հրեյական աշխարհիկ հեղինակները (Փիլոնը, Տլավիոսը, Սվետունիոսը, Տակիտոսը, և ուրիշները) վորոնք ապրել ու գրել են քրիստոնեյության ծագման ետխառնում, Քրիստոսի մասին լուություն են պահում: Իսկ նրանց յերկերի մեջ այն տեղերը, վորոնց մեջ Քրիստոսի մասին խոսվում է ամենաուշ ժամանակի քրիստոնեյական ընդորինակողներ--արտագրողների հավելումներ են, վորոնք ցանկացել են, ինչ էլ վոր լինի, ակներեվ ապացույցներ տալ Քրիստոսի գոյության մասին:

2. 54. Ավետարանական պատմվացքները հաստատում են հիաղույն ավետարանիչների վկայությունները:

Պ. 54. Ավետարանական պատմվացքները՝ մեծ չափով, «հնտերնայիտնալիստական» թափառաչըջիկ առասպելներ են հանդիսանում: Թե՛ հույները, թե՛ հընդիկները, թե՛ փոքր Ասիայի մի շարք ժողովուրդները գիտեյին կույսի անարատ սաղմնավորությամբ վորդի հղանալու մասին, փրկիչ աստվածների մահվան և հարության մասին: Հիսուսի կյանքի շատ և շատ հանդարտագներ չափազանց հեշեցնում են հնդկական Բառաբատան, պարսկական Միհրի կյանքը»

Հ. 55. Հայերեն «Հիսուս Քրիստոս» բառն ի՞նչ է նշանակում :

Պ. 55. «Հիսուս» բառը սկզբնապես հատուկ անուն չէր : Հին հրեյարեն այդ խոսքը նշանակում էր «բժշկող» : Մի քանի կիսա-հրեյական աղանդներ՝ հրապարակ դալուց հետո դեռ հարյուր տարի առաջ, «Հիսուս» անունով զանազան աստվածների և կիսաստվածների էյին պաշտում : Հույների մոտ այդ տեսակ աստվածների համար տարածված էր «Քրիստոս» անունը, վորը հունարեն նշանակում է «ոճյալ», այդ պատճառով ել՝ վորպես հասարակ անուն, այդ խոսքը մեզանում գրվում է այժմ փոքր տառով : Յերբ քրիստոնեյության մեջ սկսեցին միանալ զանազան կրոնական ավանդները, միացան նաև այդ յերկու անունները՝ Հիսուս և Քրիստոս : Այդ յերկու բառը ռուսերեն կարելի յե թարգմանել «բժշկող-ոճյալ» : «Քրիստոնեյության մեջ այդ յերկու անվանումները ձուլվեցին հետը հետե 1-ին և 2-րդ դարերի ընթացքում» (Բ.Լ.) :

Հ. 56. Ի՞նչպիսի պատմական և աշխարհագրական սխալներ կան Մաթեոսի ավետարանում :

Պ. 56. Ըստ Մաթեոսի խոսքերի՝ Հիսուսը ծնվել է Հերովդեսի թագավորության ժամանակ : Սակայն, այդ պնդումը վոչ մի հիմք չունի, վորովհետև Հերովդեսը կարողացել էր մեռնել այսպես կոչված քրիստոսի ծննդից 4 տարի առաջ : Հրեյական թալմուդը բերում է Սինեդրիոնի բոլոր ներկայացուցիչների ցանկը և նրանց մեջ կայիսիա չկա : Նաևինքն դաաի տեսարանը ճիշտ չե և հակասում է հրեյական որենքներին : Մաթեոսի հիշած աշխարհագրական տեղերը, որինակ՝ Նազարեթը, վորտեղ բնակութուն են հաստատում Հի-

սուսի ծնողները, վորպեսզի մարդարեյությունը կատարվի, նույնպես ճիշտ չեն : Հուդայի յերկրում Նազարեթ զաղաք ամենեվին չկար :

Հ. 57 Ինչո՞վ են բացատրվում այն պատմական և աշխարհագրական սխալները, վոր կան Մաթեոսի ավետարանում :

Պ. 57. Մաթեոսի ավետարանը հրատարակ է յեկել նախնական քրիստոնեյության առասպելների և ավանդությունների հավաքման հետեվանըով, ընդ մին այդ հավաքումը կատարում էյին շատ մարդիկ : Ապա մի բարեպաշտ դպրի մշակած այդ հավաքանուն պահպանել է կապը իր աղբյուրի-Մաթեոսի անուն պահպանել է կապը իր աղբյուրի-Մաթեոսի ավետարանի և բազմաթիվ առասպելների հետ, վորոնք ստեղծվել են քրիստոնեյության սկզբնական ժամանակներում : Նրանում պատմական վավերականութուն ամենեվին չկա :

Հ. 58. Ի՞նչ հակասություններ կան ավետարանների մեջ :

Պ. 58. Մի քանի որինակ բերենք : Ըստ Մարկոսի ավետարանի վկայութայն՝ Հիսուսն իր մկրտությունից հետո անմիջապես դնում է անապատ և այնտեղ մնում է 40 օր, ընդամին՝ այդ ժամանակ յենթարկվում է փորձության և պայքարում է սատանայի դեմ : Ըստ Հովհաննու՝ Հիսուսը մկրտությունից հետո 3-րդ օրը դնում է Գալիլիայի կանա զտղաքը, վորտեղ մենք տեսնում ենք նրան հարսանիքում ջուրը գինի դարձրելիս :

Մինչդեռ Մարկոս ավետարանիչը Հիսուսի ծնունդը դնում է դեկտեմբերի վերջին, Ղուկասը պընդում է, թե այդ ժամանակ մատենում էր հրեյական

գասակի տանը, այսինքն՝ վոր Քրիստոսի Տեսնող ան  
զի յե անեցեղ ժարտին:

Մաթեոսի մաս Քրիստոսը լերան քարտղի արտա-  
սանում և սարի վրա և նստած, ինչ Առկառի մոտ՝  
կանգնած և այն ել հարթ տեղում: Նման հակասու-  
թյուններից կարելի յեր առաջ բերել ինչքան ուղես:

Ը. 59. Ուրիշ, վոչ-քրիստոնեական, կրոնների մեջ  
դոյություն ունեցե՞լ են Քրիստոսի նման փրկիչ—աստ-  
վածներ:

Պ. 59. Նախաքրիստոնեական կրոնական առաս-  
պելներ չարչարվող աստծու մասին շատ կրոնների ծա-  
նոթ ե: Այդպիսիներն են Ուրբիսը, Ատտիսը, Միհրը և  
ուրիշները: Յերկրադործական այդ աստվածների ար-  
յունով ներկվել և յերկիրը: Նրանք մեռել, բայց նորից  
հարություն են առել: Նրանցից ամեն մեկը իսայտա-  
ռակ մահով մեռնող հին տարվա խորհրդանշան—սիմ-  
բոլն և յեղել, վորը վերածնվում և՛ տոնելով իր հաղ-  
թանակը, ուստի, և բնության մեջ ամեն ինչը ամեն  
տարի մեռնում և վորոշ ժամանակներում հարություն  
և առնում:

Հոռմեյական կայսրության ժամանակներում փր-  
կիչ-աստվածների պաշտամունքներն այն իմաստն ստա-  
ցան, թե աստված մեռնում և մարդկանց մեղքերի հա-  
մար, քափում և նրանց իր մահովն ու հարություն տո-  
նում՝ վորպեսզի մարդկությանը յերկրավոր դրախտը  
առնի:

Ը. 60. Ինչպե՞ս և ծագել քրիստոնեությունը:

Պ. 60 Քրիստոնեությունը՝ վորպես յերկրավոր  
չիմարությունից հրատարվող կրոն, վորը չարչա-

րանքն ու աղքատությունը թարձապես իրեալ և հայ-  
տաբարել, ծագեց հին աշխարհի ստրկական տնտեսու-  
թյան անկման պարագաներում: Հին հռոմեյական կայ-  
սրության տնտեսությունը պահպանվում էր ստրկական  
աշխատանքով: Բայց այն ժամանակից սկսած, յերբ  
Հռոմեյական կայսրությանը վիճակվեց հարձակողա-  
կան պատերազմներից պաշտպանողականին անցնել,  
ստրուկները հոսանքը դադարեց: Վրա հասավ ստրկա-  
կան տնտեսության ճգնաժամը: «Հռոմեյական տիրա-  
պետությունը նվաճված շատ յերկրների համար ճշա-  
նակում էր աստիճանական սպառում բոլոր արտադրա-  
կան ուժերի, առևտրի, արդյունաբերության և՛ շատ  
յերկրներում, դյուրամտնտեսության անկում» (Բոժի-  
ցին): Չկար մի դասակարգ, վոր հեղափոխական պայ-  
քարի և այտեղ յերկրի վրա, նոր կյանքի շինարարու-  
թյան կոչ աներ: Ստրուկները մերթ րնջ մերթ ապրս-  
տամբում եյին հոռմեյական տիրապետության դեմ,  
բայց ամեն անգամ այդ ապստամբությունները անողոք,  
կերպով ճնշում եյին հռոմեյական լիզեռները: Այդ  
ևսրխայի քայքայված տարրերը մահուողու մեջ եյին  
ընկնում: Յերկրավոր հեղափոխական միջոցների դեմ  
պայքարելն անհնարին, եր դառնում: Սկսեցին փրկու-  
թյունը վորոնել հրաշքի, աստծու դախտյան մեջ, վորը  
յերկրի վրա դրախտ պետք և ստեղծեր: Այսպիսի չար-  
չարվող աստվածներից մեկը, վոր իր մահով պետք և  
քափեր մարդկանց մեղքերը, հանդիսանում և միջական  
Քրիստոսը: Աշխարհի փրկիչ Քրիստոսի պատկերը,  
վոր փոխ եր առնված արեելյան ուրիշ կրոններից, ծա-  
նոթ և մոտիկ եր այն ժամանակի հեթանոսական ժողո-  
վուրդներին, վորոնք հեծեծում եյին հոռմեյական քո-

ղաքական և իրենց սեփական շահագործողների ճնշումից: Քրիստոս—Մեսսիայի դալստյան վրա յեւ այն քամանակի ժողովուրդները ղնում եյին իրենց հույսերը:

Հ. 61. Յեթե Քրիստոսը չի յեղել, ապա ուրեմն ինչո՞ւ մեր տարեթիվը «Քրիստոսի ծննդից» ե հաշվւում:

Պ. 61. «Ըստ տերտերների հաշվարկութեան՝ Քրիստոսի ծննդյան տարին զուգադիպում ե Հռոմ քաղաքի հիմնադրման՝ 754 թվականին: Սակայն նույն տերտերները հայտարարում են, թե Քրիստոսը ծնւվել ե «Հուդայի թագաւոր Հերովդեսի որով»: Ինչ վերաբերում ե Հերովդեսին, հայտնի չե, վոր հռովմեայական սենատի հրովարտակով նա թագաւոր ե նշանակվել 714 թվականին և 37 տարուց հետո մեռել ե: Այսպիսով, Հերովդեսի մահն ընկնում ե 751 թվականին, իսկ այս նշանակում ե, թե Հերովդեսը մեռել ե յերեք տարի առաջ այն թվականից, վորը տերտերները Քրիստոսի ծննդյան տարին են հրամարում: Իսկ տերտերները վորտեղի՞ց են վերցրել տեղեկութունները Քրիստոսի մասին: Ակներև ե, վոր այդ տեղեկութունները անխտիր մտացածին են, ինչպես և մտացածին ե տերտերների այն ցուցմունքը, թե աստվածն ստեղծել ե աշխարհը սրանից մոտավորապես 7000 տարի առաջ» («Բ.» 1.):

Հ. 62. Վո՞րտեղ և յե՞րբ առաջին անգամ սահմանվել ե Քրիստոսի ծննդյան քրիստոնեայական տոնը:

Պ. 62. Քրիստոսի ծննդյան տոնը առաջին անգամ սկսել ե տոնվել Բյուզանդիայում IV դարի վերջում:

Հ. 63. Ի՞նչ ե ուսուցանում ավետարանը:

Պ. 63. Ավետարանը քարոզում ե խոնարհութիւն,

հեղութիւն, ինքնարհամարանք: Նա չի բողոքում ըստրկութեան, թագաւորների բռնակալութեան դեմ. ընդհակառակն՝ նվիրագործում ե ամեն մի քաղաքական և տնտեսական ճնշում: «Մտրուկնե՛ր, ամեն բանում հընազանդ յեղեք ձեր մարմնավոր տերերին»: «Աստուծոց վախեցեք, թագաւորին պատվեցեք»— ահա ավետարանական բարոյականութեան հիմունքները: Չարմառնալի չե ուրեմն, վոր այդ բարոյականութիւնն այնպիսի նախանձախնդրութեամբ պաշտպանում են հրամանատարական դասակարգերը:

Հ. 64. Ի՞նչպիսի բարոյականութիւն ե արդի կոմունիստական բարոյականութիւնը:

Պ. 64. Կոմունիստական բարոյականութիւնը յենթարկվում ե դասակարգային պայքարի շահերին:

«Մենք ասում ենք, վոր մեր բարոյականութիւնը լիովին յենթարկվում ե պրոլետարիատի դասակարգային պայքարի շահերին: Մեր բարոյականութիւնը բղխում ե պրոլետարիատի դասակարգային պայքարի շահերից: Յեւ մենք մեր կոմունիստական բարոյականութիւնը յենթարկում ենք այդ խնդրին: Մենք ասում մենք՝ «այն ե բարոյականութիւնը, ինչվոր ծառայում ե հին շահագործական հասարակութեան քայքայմանը և բոլոր աշխատավորներին պրոլետարիատի շուրջը համախմբելուն, վորը ստեղծում ե կոմունիստների նոր հասարակութիւնը» (Լենին. Ճառը ՀԼԿՅՄ Միութեան անելիքների մասին ՀԼԿՅՄ Համառուսական III համագումարում 1920 թվականի հոկտեմբերի 4-ին. հատ. XVII):

Հ. 65. Ինչպե՞ս ե կազմվել քրիստոնեայական յեկեղեցին:

Պ. 65. Սկզբում քրիստոնեական համայնքը հասարակ մարդկանց համայնք էր: Ամեն վոք կարող էր քարոզիչ, տառաչիչ դառնալ: Քայց շուտով հրատարակ է գալիս նոր ույժ—յեպիսկոպոսություն, վոր դարձապեղ է համայնքի յեկամուտների և ծախսերի կառավարիչների առանձին պաշտոնից: Համայնքի ընդարձակմանը զուգընթաց՝ մեծանում է նույնպես պաշտոնատար անձերի քանակը: Հրատարակ է ե գալիս կղերականությունը: Յեպիսկոպոսը կղերի հետ միասին իրեն է սեփականում իրոք իրավունքները: Կղերն անջատվում է համայնքից: Յեպիսկոպոսներին սկսում է ընտրել կղերը, այլ վոչ համայնքը՝ առաջվա նման: Յեկամուտների առյուծի բաժինն ընկնում է կղերին: Յեպիսկոպոսները դառնում են յեկեղեցու իշխանները: Շահագործող դասակարգերը հետզհետե յեկեղեցին յենթարկում են իրենց շահերին: Քրիստոնեական կրոնը դառնում է դասակարգային ճնշման ամենահզոր գործիչներից մեկը:

Հ. 66. Ինչպե՞ս է ծագել «պապ» խոռը:

Պ. 66. Հին հունական լեզվի մեջ «պապաս» նշանակում է քահանա, ե՛լ ավելի առաջ՝ ետրոակների մոտ, «պապա» նշանակել է քուրմ:

Հ. 67. Քրիստոնեությունը կատարե՞լ է արդյոք սիրո պատվիրանները:

Պ. 67. Յեկեղեցին հրով ու արյունով է պաշտպանել իր տիրապետությունը: Իր դասակարգային հակառակորդներին արժատապես վոչնչացնելու համար՝ կազմակերպել է «սուրբ ատյանը»—ինկվիզիցիան (XIII դարում): Միջին դարերի ընթացքում Յեվրոպայում կոտորածներ է յեն յենթարկվել և ապա կենդանի-

կենդանի այրվել ինն միլիոնից ավելի մարդ: Կատարյալներ և վհուկներ: Այդ թվի մեջ չեն մտնում այն հարյուր հազարավոր զոհերը, վորոնք այրվել են ինկվիզիցիայի վրա՝ սուրիչ մեղքերի համար: Այսպես է «մերձավորին սիրելու» քարոզը, վոր գործնականորեն քարոզել է յեկեղեցին:

Հ. 68. Ի՞նչ են ինչպիսիք արչավանքները:

Պ. XI—XIII դարերի խաչակրաց արչավանքները արևմտա-յեվրոպական պետությունների արյունահեղ պատերազմներն են՝ Մերձավոր Արևելքի ժողովուրդպատերազմներն են: Տիրոջ Փանտաստիկական դերեղմանն ազատելու պատրվակով՝ փաստորեն նվաճված ժողովուրդների հողերի և գյանազան հարստությունների լիբթալանն էր կատարվում:

Հ. 69. Ի՞նչ է «յեկեղեցական տասանորդը»:

Պ. 69. «Յեկեղեցական տասանորդը» բունի հարկահանությունն էր հոգևոտ յեկեղեցու և հոգեվորականության, վորը դոյություն ուներ մեղանում և Արևմտյան Յեվրոպայում: «Տասանորդ» բառը ծագում է հարկերի չափից, վորոնք կազմում էին վճարողի բոլոր յեկամուտների մեկ տասներորդ մասը:

Հ. 70. Ի՞նչ դեր է խաղացել ուղղափառությունը ինքնակալության պաշտպանության մեջ:

Պ. 70. Ուղղափառ հոգևորականությունը հավատաբնությամբ էր ծառայում ինքնակալության շահերին: Նա զանազան ձևերով կոչ էր անում աշխատավորներին կալվածատերերի և կապիտալիստների խոնարհ, հեղ ստրուկները լինել: Հոգևորականությունը ժողովուրդի մեջ այն կարծիքն էր պաշտպանում, թե թագավորի իշխանությունը աստուծուց է սահմանված:

Յարական կառավարությունը հողերի արտադրությանն եր համընկ մատաղ սերնդի ղառախարակությանը: 1915 թվականին յեկեղեցական— ծխական դպրոցների թիվը 35,866 եր, իսկ նրանց մեջ սովորում էին 2·866·277 յերեխա: Ծարքային զինվորների մասսային մինչպատերազմյան հոգևորականությունը քարոզում եր անպայման հնազանդություն կալվածատերերի և կապիտալիստների կամքին: Ուղղափառ հոգևւորականությունն սգնում եր ցարական կառավարությանը հալածել ալյադականներին, նա մասնակցում եր ջարդերին, վորոնք ուղղված էին հրեյաների և մյուս ալյադգիների դեմ: Իր հավատարիմ ծառայության համար՝ հոգևորականությունը ցարական կառավարությունից ստանում եր բազմաթիվ պարգևներ:

Հ. 71. Ի՞նչ իմաստ ունի յեկեղեցին պետությունից բաժանելու մասին արված դեկրետը:

Պ. 71. 1918 թվականի հունվարի 23-ին խորհրդային իշխանությունը դեկրետ հրատարակեց՝ յեկեղեցին պետությունից և դպրոցը յեկեղեցուց բաժանելու մասին: Ըստ այդ դեկրետի՝ յուրաքանչյուր քաղաքացի վարող ե դավանել վորև և կրոն կամ չընդունել և վոչ մեկը: Իեկրետի 4-րդ հոդվածը վերացնում ե վորևեկրոնական արարողություն և ծես այս կամ այն պետական կամ հասարակական հիմնարկների գործողություն ժամանակ: Իոլորի համար ապահովվում ե նրանց կրթոնական ծեսերի և պաշտամունքների կատարումը, բացի նրանցից, վորոնք կխանդարեն հասարակական կարգը կամ հանցափորձ կկատարեն խորհրդային հանրապետության մյուս քաղաքացիների իրավունքների դեմ: Պետությունը կրոնի կատարման համար վոչ մի

ծախս չի վճարում: Մեր պետության մեջ դոյություն ունեցող յեկեղեցական և կրոնական հասարակայնությունների դույզը հայտարարվում ե ժողովրդական սեպիականություն: Որինական ե ճանաչվում միայն քաղաքացիական ամուսնությունը: Ամուսնությունների ապահարդանք պետական որդանների գործն ե:

Հ. 72. Իչպե՞ս ե վերաբերվել յեկեղեցին Հոկտեմբերյան հեղափոխությանը:

Պ. 72. Հինց վոր Խուսաստանի բանվորներն ու դյուղացիները 1917 թ. իրենց ձեռքն առան իշխանությունը, յեկեղեցին ել անմիջապես ծխացավ հեղուփոխության թշնամիների բանակին: Պատրիարքական տիտի համար ընտրված Տիխոնը ժողովրդին ուղղած իր դիմումի մեջ բանադրում եր բոյլչեիկներին: Նրա ղեկավարությունը հակահեղափոխական յերույթներ ելին կազմակերպվում այն ժամանակ դեռ յերկուսարդ մորհրդային իշխանության դեմ: Յեկեղեցիների մի հսկայական մեծամասնություն գենքի սահեռատան եր վերածվում: Յարոտլայիսիու ապստամբության ժամանակ վանականները զանգակատներից կրակում էին անգին բանվորների և դյուղացիների վրա: Կոլչակի, Իենիկինի և Վրանգելի ժամանակ հատուկ զնդեր էին կազմակերպվում խոշոր կալվածատերերի և կապիտալիստների շահերը սաչտպանելու համար:

Հ. 73. Ի՞նչ ե Կարլովիցի յեկեղեցական ժողովը:

Պ. 73. 1921 թվականի դեկտեմբերին արտասահմանում, Կարլովիցում (Հարավ-Սլավիա) գումարվեց առևտական սեղափառ յեկեղեցու համաժողովենական յեկեղեցական ժողով: Ժողովին մասնակցում էին արտասահման փախած բոլոր հակահեղափոխականները:

ժողովը վորոշեց, թե սխառ է վերականգնել ինքնակա-  
ռութեանը Ռուսաստանում և թե ցարժ տնայայտան  
սխառ է Ռուսաստանի տնիցը լինի:

Հ. 74. Ինչո՞վ է բացատրվում վերանորոգչական  
հոսանքների հանդես գալը յեկեղեցու առթիվ:

Պ. 74. Քաղքենին և կուցակը ձգտում են՝ վորքան  
կարելի յե, թագցնել իրենց, հակահեղափոխական  
գեմը և բացարձակ դուրս չգալ խորհրդային իշխա-  
նութեան դեմ: Այստեղից ել ծագում է յեկեղեցու հար-  
ժարեցումը Սորհրդային Միութեան պայմաններին,  
նրա համար՝ վորպեսզի դադարապես լեզալ աղղե-  
ցութեանը դործի գյուղացիական մասսաների և բան-  
վոր դասակարգի ավելի հետամնաց տարրերի վրա:  
Սակայն, ըստ էյութեան, վերանորոգչականութեանը  
վոչ պակաս հակահեղափոխական է, քան տիխոնկա-  
նութեանը:

Հ. 75. Ինչպե՞ս է վերաբերվում յեկեղեցին պրո-  
լետարիատի սոցիալիստական շինարարութեանը:

Պ. 75. Հողերականութեանը ներկայումս հանդես  
է գալիս գյուղի կուլակային տարրերի և քաղաքի քաղ-  
քենիութեան գաղափարախոսի դերում: Իսկ այդ կող-  
մից նա վորոչ վտանգ է ներկայացնում սոցիալիստա-  
կան շինարարութեան համար: Հողերականութեանը  
ոգնում է աղգաբնակչութեան վերևում մատնանշված  
խմբերին՝ տիրելու պրոլետարիատի անտեսական և քա-  
ղաքական դիրքերին: Ներս սղոսկել խորհուրդը, կոո-  
պերացիան— ահա քաղաքի և գյուղի մանրբուրժուա-  
ական տարրերի նվիրական մտորումը: Այդ գործում  
հողերականութեանը իր կարողութեան չափով ոգ-  
նութեան է ցույց տալիս նրանց: Ամենուրեք կուլակը,

տերութիւնը և մոլլան միարան են, միչտ իրար պաշտպա-  
նում են: Տվյալ դեպքում հողերականութեանը իր  
սովորական աշխատանքն է կատարում յերկնային հե-  
ղինակութեանների անուններով սպասարկելու ունեւոր  
դասակարգերի յերկրային գործերին:

Հ. 76. Ինչո՞ւ տիրող դասակարգը չահադրդո-  
ված է նրանով, վոր Քրիստոսին «սոցիալիստ» ներ-  
կայացնեն:

Պ. 76. Տերութիւնները գիտեն, վոր սոցիալիստական  
ուսմունքները յայնորեն տարածած են բանվորական  
մասսաների մեջ: Վորպեսզի իրենց աղղեցութեանը  
պահպանեն աշխատավորների վրա, տերութիւնները վո-  
րոյել են Քրիստոսին նախել վորպես սոցիալիստ:  
Մինչդեռ իրող ավետարանական Քրիստոսը սոցիալիզ-  
մի հետ վոչ մի ընդհանուր բան չունի: Ավետարանա-  
կան Քրիստոսը հարուստների, կապախուսների, հար-  
կահանների և նմանների բարեկամն է հանդիսանում:  
Քրիստոսը քարոզում է. «Տուք գիւյսերն՝ կայսեր»,  
այսինքն՝ հարկ վճարիր, տուր ջո աշխատավարձը, ջո  
իրավունքները չահադրծողներին և այն ժամանակ  
կեդրիվես... յերկնքում: Իսկ ինչ վերաբերում է նախ-  
նական ջրիստոնեյական համայնքների «կոմմունիզ-  
մին», այդ սպառման առարկաների կոմմունիզմն էր,  
այլ վոչ արտադրութեան գործիքների կոմմունիզմ,  
ինչի մասին վոր խոսում են արդի կոմմունիստները:

Հ. 77. Ի՞նչ է աղանդավորութեանը:

Պ. 77. Աղանդավորները սրբածամաքած, ժամա-  
նակակից պայմաններին ավելի հարմարեցրած կրոնի  
կողմնակիցներ են հանդիսանում: Աղանդավորները  
դեն են չպրտում ուղղափառ յեկեղեցու բոլոր ծխա-

կանութիւնը և կոչ են անում յերկրագագել տիրոջը  
«Տոգով և ճշմարտութեամբ»: Նրանցից շատերն աչ-  
խատում են քաղել կոմունիզմին, իրենց անվանում են  
«քրիստոնէական կոմունիստներ», վորպեսզի դրա-  
նով ե՛լ ամելի աջողութեամբ դանդաղեցնեն մեր սո-  
ցիալիստական շինարարութիւնը: Վորպեսզի ընդգծեն  
իրենց «ճախութիւնը», նրանք առաջարկում են ան-  
հապաղ և ընդհանուր «յեղբայրութիւն է Գրիստոս»  
բոլոր մարդկանց— և՛ կուլակներին, և՛ չքավորներին, և՛  
պրոլետարիատի յեղբայրութիւն: Աղանդավորները  
քայքայում են կոոպերացիայի մե՛ր շինարարութիւնը  
նրանով, վոր կառուցում են իրենց առանձին կոոպերա-  
ցիան կուլակների գլխավորութեամբ, այդպիսով դարձ-  
նելով այն սոցիալիստական շինարարութեան գործիքից  
չահագործութեան և կուլակներին հարստացնելու գոր-  
ծիք: Նրանք թշնամաբար են սրբամաղբաժ դեպի խոր-  
հրդային հասարակայնութիւնը: Վորպեսզի իրենց ազ-  
դեցութիւնը պահեն իրենց անդամների վրա, աղան-  
դավորները կառուցում են իրենց առանձին կազմա-  
կերպութիւնները (յերիտասարդութեան աղանդավո-  
րական խմբակներ, խմբական յերգեցողութեան խում-  
բակներ և այլն): Աղանդավորական համայնքները  
գլխավորում են սովորաբար կուլակները, հարուստնե-  
րը և զանազան «հետ յեկած թարդիկ», ինչպիսիք են  
նախկին գեներալ-մայոր Նեստորովսկին, նախկին Ը-  
տաբա-կապիտան Տոմաշևսկին և այլն:

Հ. 78. Ի՞նչ թիվ են կազմում կրօնական կազմա-  
կերպութիւնները Խորհրդային Միութեան մեջ:

Պ. 78. ԽՍՀՄ-ում 1929 թվականի սկզբին հաշ-  
վելով եր 50.000 յեկեղեցի, 80.800 յեկեղեցական միա-

վորներումներ, 25.000 աղանդավորական համայնք և ա-  
ղութատուն: Յեկեղեցականներն ունեն հիսուն հազար  
հատուկ շենքեր, 850.000 տերտեր, 100.000 վանական,  
ժողովորադես՝ կես միլիոն յեկեղեցական-ծխական  
խորհուրդների անդամ, 6 միլիոն աղանդավոր—այս-  
պես և կենդանի և գործույթ հակահեղափոխական  
ակտիվը, վոր լեզալ հնարավորութիւններն ուղտագոր-  
ծում և ԽՍՀՄ-ում՝ հոգևոր ցլիով ժողովրդական  
մասաներին լուսավորելու և խորհրդային իշխանու-  
թեան դեմ պայքարելու համար:

Հ. 79. Ի՞նչ նպատակ է հետապնդում արտասահ-  
մանի բուրժուազիան, նյութական ոժանդակութիւն  
ցույց տալով մեր Միութեան տերիտորիայի վրա գոր-  
ծող աղանդավորական համայնքներին:

Պ. 79. Կապիտալիստական աշխարհը արշավի յե  
պատրաստվում ԽՍՀՄ վրա, վորի (արշավի) նպատակն  
է մեր հանրապետութիւնը դարձնել գաղութային յեր-  
կիր: Մեզանում գոյութիւն ունեցող աղանդավորա-  
կան համայնքները պետք է՝ ըստ գիտավորութեան  
արշավի վողևորիչների ԽՍՀՄ վրա, նախ՝ իրենց շուր-  
ջը համախմբեն բոլոր հակախորհրդային և հակահե-  
ղափոխական տարրերին. յերկրորդ՝ թուլացնեն պրո-  
լետարիատի դասակարգային կամքը և բաժանեն  
այժմյան միասնական և միաձուլ բանվորական դա-  
սակարգը առանձին ջոկատների՝ ըստ ազգութեան և  
հավատի (Մ. Գորեվ. թեղիսներ հակահրօնական գե-  
կուցման համար բանվորների մեջ):

Հ. 80. Ի՞նչ է անաստվածների միութիւնը:

Պ. 80. Անաստվածների միութիւնը կամավոր ըն-  
կերութիւն է, վոր նպատակ է գրել ձեռագրել բոլոր

գլխավոր աշխատավարձերին ահաբեկ պայքար կազմակերպելու համար ամեն տեսակի և ձևի կրոնի դեմ»։ Միությունը կազմակերպում է բՆԻՆԵՐ Փարբիկայում և գործարանում, աշխատանքներին կից, գինավորակա՞ն մասերում, դպրոցական հիմնարկներում, ավաններում և գյուղերում։ Անաստվածների միության ըսկիզբը դրվել է 1925 թվականին։ Ներկայումս անաստվածների միության շարքերում կան մոտավորապես 1.000.000 անդամ (1930 թ. համար)։

Անաստվածների միությունը սերտ կապ է պահում արտասահմանյան անաստված կազմակերպությունների հետ։

#### IV. ՏՈՆԵՐԻ ՅԵՎ ԾԵՍԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Հ. 81. Ինչպիսի՞ արձատներ ունի թաղման ծեսը։

Պ. 81. Թաղման ծեսը շատ հին ծագումն ունի։ Նա այն ժամանակին է վերաբերվում, յերբ մարդու մեջ առաջին անգամ կրոնական հայացք է առաջ յեկել։ Նախնական մարդու կարծիքով՝ մեռածի հոգին կարող է վնասել կենդանի մարդկանց, յեթե նրա սիրտը չչահեն վորեւե նվիրաբերությամբ։ Ուստի մեռածի ազգականները կամ նրա բարեկամները հանգուցյալի գերեզմանի մեջ դնում եյին ուտելիք, թաղում եյին կանանց, ձիեր, ստրուկներ և ստրկուհիներ, վորպեսզի այդպիսով շարժեն նրա գութը։ Դեռ այժմ ել այս խոսքերն արտասանելիս՝ «հանգո՛ւ, տեր, զհոգի ծառային քո», հավատացյալը հույս է տածում, թե այս մոգական թովչության շնորհիվ՝ հանգուցյալի հոգին հանդատանում է և այլևս ի վիճակի չի լինում վնասել մարդկանց նրանց անտեսական կյանքում (Ձիգուրին, «Անաստվածի այբուբեն»)։

Հ. 82. Ի՞նչպիսի թաղումն են ընդունում անաստվածները։

Պ. 82. Անաստվածներն ընդունում են դիակիզում կամ հրկիզման թաղում։ Դիակիզման վառարանում դիակիզումը կատարվում է վոչ թե բոցով, այլ շիկացած դաղերով (մինչև 1000°)։ Դիակիզման դեմ են դուրս գալիս միայն տերտերները։ Մինչև հեղափոխությունը գերեզմանատները պատկանում եյին թեմական դերատեսչության և հսկայական յեկամուտ եյին տալիս նրան։ Ահա թե ինչու մեզանում դիակիզման նախկին փորձերն անհոյող անցան։ Ներկայումս հոգեվորակափորձերն անհոյող անցան։ Ներկայումս հոգեվորակափորձյունը մեզանում հրկիզման թաղման դեմ է դուրս գալիս, վորովհետև վերջինս խորտակում է տերտերական այն շինծու մտայնությունները, վորոնք կապված են «մեռելների հարության» մասունքների և այլ հիմարությունների մասին յեղած առասպելի հետ։ Մեր հանրապետության մեջ տոսյժմ միայն Մոսկվայումը կա դիակիզարան։

Հ. 83. Ինչո՞ւ դադարի շուրջը չորս մոմ են վառում։

Պ. 83. Հնումը հանգուցյալի շուրջը խարույկներ եյին վառում, յենթադրելով թե կրակը հետ է ըլում չար վորդիներին, վորոնք կարող եյին հափշտակել հոգին այն նպատակով, վոր նրան մի նոր չար վորդի դարձնեն։ Այդ խարույկներից է պահպանվել այժմյան չորս մոմ վառելու սովորությունը (Փիգուրին Ա. Բ.)։

Հ. 84. Ինչպի՞սի ծագում ունի սուրբ հաղորդությունը։

Պ. 84. Խոր հնության մեջ մարդիկ հավատում եյին,

Թե աստվածներն ապրում են այս կամ այն կենդանիների պատկերով: Յեթե այդպիսի կենդանիները մարմինն ունեւ, դրանով դու կարող ես միանալ («մերձենալ») աստծու հետ և դառնալ ե՛լ ավելի մաքուր և ավելի ուժեղ: Հին ժողովուրդներից շատերի կարծիքով փրկիչ-աստվածները յերբեմն ապրում էին յեղների և վոջխարնների մէջ: Այդպիսի կենդանիներին պաշտում ե- յին վորպես աստվածներ: Յերբ նրան մորթում էին, մարմինը բաժանում էին հավատացյալներին, վորոնք կարծում էին, թե մորթված կենդանիների մի կտոր մօի հետ նրանք կուլ են տալիս նաև աստծու մի մաս- նիկը և դրա շնորհիվ ել հաղորդություն էին հաստա- տում աստծու հետ: Հետագայում կենդանիներին փո- խարինեցին յեղների՝ խմորից թխված, Փիղուրաներ և այդ Փիղուրաներն ուտում էին հավատացյալներն այն համոզմունքով, թե նրանց հետ միասին ճաշակում են աստվածութեան մասնիկները. հետո յեղան պատկերա- կերպերի-Փիղուրաների փոխարեն սկսեցին նշխարք պատրաստել հաղորդութեան համար: Հետագայում ըս- կըսեցին հաղորդվել դինիով և հացով: Ներկայումս բուրժուազիան և յեկեղեցին հաղորդութեան խորհրդի միջոցով աշխատավորներին դարձնում են իրենց դասա- կարգային պահանջների հնազանդ կատարողները: Չե՞ վոր հաղորդութեան խորհրդին նախորդում ե զղջումը- խոստովանությունը, վորը պատվիրում ե հավատաց- յալներին՝ ներել իրենց թշնամիներին և հաշտվել նրանց հետ, իսկ դեպքը բերած ժամանակը՝ խոստովանահոր ձեռքը մատնել այս կամ այն խոովարարին, վորը չի ցանկանում ճնշման, շահագործութեան և աղքատու- թեան վրա հիմնված հասարակութեանը ճանաչել:

Հ. 85. Ի՞նչ ե աղոթքը:

Պ. 85. Մեռածի հոգուն զոհ նվիրաբերելիս՝ այդ ծեսը կատարողը, ձգտելով իր կողմը դրավել նրան, սովորաբար իր «ցանկություններն և արտասանում»: Կենդանի մարդկանց այդ դիմումը իրենց նախնիքների հոգիներին՝ նրանց ցանկությունների և խնդիրների արտահայտությունների հետ միասին, ընդունում ե «աղոթք» անունը (Լողինով): «Տեր՛, վողորմյա՛» ա- ղոթքը ստրուկների մի ժամանակվա վողջույնն եր: Հին Հունաստանում ստրուկներն այդ խոսքերով վողջու- նում էին բոլոր հարուստ և ազնվական մարդկանց՝ նրանց հանդիպելիս, մինչեվ դետին խոնարհվելով նրանց առաջ: Այդ աղոթքի մէջ արասհայտված հնա- դանդութեան վողին այնքան դուր ե յեկել տերտերնե- րի ճաշակին, վոր պաշտամունքի մի քանի տեղերում այդ աղոթքը 40 անգամ են կրկնում: Մյուս աղոթքնե- րն ել նույնպես իրենց վրա ստրկութեան դրոշմ են կը- րում (Փիղուրին, Բ. Լ.):

Հ. 86. Ի՞նչ ծագումն ունեն մաղթանքներն ու որհ- ներդությունները:

Պ. 86. Մաղթանքներն ու որհներդությունները— դրանք հին կախարդություններն են, վորոնցով հմա- յում էին վողիններին և աստվածներին: Մաղթանք- ները ծառայում էին այս կամ այն սրբերին, այն կա- պակցութեամբ՝ թե ինչ են ուղում ստանալ աստծուց. ձիյերի համար աղոթում են Փլորին և Լավրին (ձիու անհոգի), կովերի համար՝ քաջամարտիկ Գեորգին (կովերի աստված), զինվորապետութեան համար՝ Անիկ (կովերի աստված), զինվորապետութեան համար՝ Անիկ (կովերի աստված), զինվորապետութեան համար՝ Անիկ (կովերի աստված) և այլն: Ամեն մի տեքտեր կենցաղային ա- զորավարին և այլն:

սորյա դեպքի համար ունի համապատասխան սուրբ, մասնադեա այս կամ այն մասի (Ֆիզուրին, Ա. Բ.):

Հ. 87. Ի՞նչ են թափոքները:

Պ. 87. Թափոքները — գրունք մասսայական ուխտադնացություններն են դեպի սրբավայրերը: Թափոքները յերաշտի առթիվ կատարում եյին հոռմեյացիները և հույների մեջ նույնպիսի ձևերով, ինչպես կատարվում են մեզանում (Ֆիզուրին Ա. Բ.):

Հ. 88. Ի՞նչ ծագում ունի մոմեր վառելու ծեսը:

Պ. 88. Մոմերը՝ կրակի նախնական աստվածացման մնացորդն է:

Հ. 89. Ի՞նչ է յերրորդությունը.

Պ. 89. Յեռանձնյա աստծու հավատը ծագել է Բ. Մ. մի քանի հազարամյակ առաջ: Յերրորդությունը գոյություն է ունեցել շատ ժողովուրդների մեջ: Հընդիկները մեջ գոյություն ունեն Բրամա, Վիշնա, Շիվա, յերրորդությունը, յեղիպացիների մեջ՝ Ոզիրիս, Իզիդա, Գորուս յերրորդությունը և այլն: Նախնական ժամանակներում մարդիկ պաշտում եյին յերրորդությունը արեվի, կրակի և ոգի տեսքով: Արեվը (հայրաստված) յերկիրն է ուղարկել կրակ-աստված վորդուն (մարդկային միջնորդ, վոր կրակ է ձեռք բերել): Բայց կրակ չէր յերեվում ավաստիկայի վրա (կրակ ձեռք բերելու գործիք), յեթե կրակն ողով շփշվեր (սուրբ հողի-աստված): Գրիստոնյական յերրորդությունը վերջնականապես ընդունվել է միայն 381 թվականին Կոստանդնուպոլսի ժողովում:

Հ. 90. Ի՞նչպես է ծագել մկրտության ծեսը.

Պ. 90. Մկրտության ծեսը վերընթացով խոր հնու-

թյան է հասնում, թերեվս այն ժամանակին, յերբ մարդիկ հավատում եյին ջրի կախարդական ույժին: Մըկրտությունը իբրև միջոց է ծառայել կապ հաստատելու ջրի աստծու հետ: Ամենից ավելի հավանականն այն է, վոր սկզբնապես խոնարհությունը ջրի աստծուն արտահայտվում էր մարդկանց զոհաբերությամբ, վորոնք խնդրվում եյին ջրում, միայն հետագայում նըման զոհաբերությունը փոխարինվել է ջրի մկրտությամբ:

Հ. 91. Վորտեղից է իր սկիզբն առել տերտերների ձեռքերը, խաչ, սրբերի պատկերներ և ուրիշ սրբազան իրեր համբուրելու սովորությունը:

Պ. 91. Տերտերների ձեռքերը, խաչերն և այլն համբուրելու սովորությունը տերտերին և նրանց իրերին ստրկական վերաբերմունք արտահայտելու մընացորդն է: Համբուրելը շատ հակաառողջապահական և վտանգավոր բան է, վորովհետև սովորաբար սրբերի պատկերներ ու մյուս «սրբազան» իրերը (հաղորդության սկիհները) վարակիչ հիվանդություններ (սիֆիլիս) տարածելու միջոց են հանդիսանում (Ֆիզուրին Ա. Բ.):

Հ. 92. Ի՞նչ են հրաշագործ պատկերները:

Պ. 92. Հրաշագործ պատկերն այն պատկերներն են, վորոնք իբր թե վորևե գերբնական հատկություն ունեն: Հավատացյալները սրբերի պատկերներից վոմանց, սրինակ, բժշկելու ընդունակություն են վերագրում:

Ճարական սրբում հոգեվորականությունը մասսայորեն հրաշագործ պատկերներ էր պատրաստում, վորոնք նրան հսկայական յեկամոտներ էյին բերում: Ճարական ինքնակալությունը կրիտիկական ընդունում

յեւածոյոյ պաշտպանում եր այդ կամ այն հրատապանութեան տակերնեցի առաջադրեցերը, վորովհետեւ այդ ճանապարհով նրան աջողութեամբ եր ժողովրդական խաղաղ մասնակցութեամբ զեւացնել նրանց տնտեսական ծանր ճնշումի և քաղաքական անիրավութեան իսկական հեղինակները դեմ պայքարելուց :

Հ. 93. Հնարավոր ե սրբերի պատկերները վերանորոգութեամբ :

93. Պատկերները ինքնանորոգութեամբ սրիկայական աջակցութեամբ ե, վոր կիրարկում են տերտերները՝ հիմարացած հասկատացյալ հոտի դրականներից յեկամուտներ կորզելու համար : Պատկերների նորոգութեամբ կարող ե կատարել ամեն մարդ, դրա համար կիրարկելով ամենքին մատչելի միջոցներ :

Հ. 94. Ի՞նչ են մասունքները :

Պ. 94. Մեռածի դիակը կարող ե քայքայումից պահպանվել, յեթե ընկնի հարմար պայմանների մեջ : Այսպես, յեթե գերեզմանի մեջ շարունակ չոր ոգ մտնի, այդ դեպքում դիակը կչորանա, մումիա դառնալով : Լինում ե և այնպես՝ վոր գերեզմանում դիակի միջով կրաջուր ե հոսում, իսկ ող չի մտնում, այդ դեպքում դիակի բըջիջները լցվում են կրով և դիակը քարանում ե : Գրիստոնեական յեկեղեցին, ի նկատի ունենալով նախնիքներին յերկրապագելու ին ժողովրդական պաշտամունքը, ոգտոգործում եր այդպիսի յերկրապագելու ու հնարավորութեամբ, վորպեսզի բարձրացներ իր «սրբերի» հեղինակութեամբ և դրանով մեծացներ դեպի տաճարները հոսող նվիրաբերութեամբ վորակը : Հոկոտեմբերից հետո մեղ մոտ՝ Ռուսաստանում բացվել են մի

քանի տասնյակ մասունքներ : Մասունքների տապանակները կամ դատարկ եյին լինում (որինակ՝ Ալեքսանդր Նեվսկու տապանակը), կամ լցված եյին վոսկորների մնացորդներով, ընդամին՝ մարդկանց վոսկորների մեջ պատահում եյին նաև կենդանիների վոսկորներ կամ բամբակից շինած խրտվիլակներ, կամ պարզապես ամեն տեսակ դեն զցելու բաներ, ինչպես տաշեղ, ժանգոտ մետակ դեն զցելու բաներ, ինչպես տաշեղ, ժանգոտ մետակ եւ մյուս նշանները լիբ խաբեբայութեամբ են, մասսաների տգիտութեամբ դոհացում տալու համար (Յիզուրին Ա. Բ.) :

Հ. 95. Ի՞նչպես ե ծագել խաչը :

Պ. 95. Խաչը հայտնի յեր հին ժամանակներից : Հեթանոսական տաճարների վրա խաչ եր դրվում . թագաւորներն ու զբմերն իրենց սլարանոցին խաչ եյին կրում . պարսիկների մեջ սովորութեամբ կար ճակտի վրա խաչեր չինել : Հին ժողովուրդներից շատերի մոտ աստվածապատկերներ են գտնվում դրամների, անոթների և հուշարձանների վրա զրիստոնեայութեան ժամանակից առաջ : Խաչի պաշտմունքի լայնորեն տարածված լինելը բացատրվում ե նրանով, վոր խաչը հիշեցնում եր կրակի և արեւի աստծուն : Կար ժամանակ, վոր մարդիկ կրակը ձեռք եյին բերում խաչի մի առանձին ձեւի ոգնութեամբ (սվաստիկայի) : Այդ ժամանակից ել խաչը պաշտվել ե վորպես մի սրբազան նշան, վորով կարելի յեր աստծուն կապվել : Բուրժուական պետութեամբ համար՝ խաչը պրոլետարիատի հոգևոր զինաթափման դրոշմից ե : Բուրժուական կրոնի ոգնութեամբ, վորտեղ տանջանք բարձրագույն իդեալ ե համարվում, ձգտում ե այդ իդեալը

նվիրական դարձնել աշխատավորների համար: Խաչի վրա բեմվեռված Քրիստոսը պետք է միշտ հիշեցնի պրոլետարիատին, թե ինչպես լա՛վ է արհիւնների փոխաբեն տանջվել, ինչպես լա՛վ է, ինչքա՛ն քաղցր շահագործութեան լուծը կրել:—Հանուն իր «յեղորդ»-կապիտալիստի:

Հ. 96. Վո՞րտեղից է ծագել դատկական «ձուռն»:

Պ. 96. Վորկրամոլութունը և հարբեցողութունը շատ աչքառու տեղ ելին բնում հին Հեթանոսների դարնանային տոների, ինչպես և այժմյան քրիստոնեյանների դարնանային տոների մեջ: Տոնին ուտում ելին ամենալավ, ամենաթարմ և համեղ կերակուրը, իսկ այդպիսի կերակուր հանդիսանում ելին թոչունների ձվերը: Այստեղից ել ծագել է գատկական «ձուռն»: Ձուռն ներկում ելին փայլուն, դեղին կամ կարմիր գույներով՝ ահա թե ինչու հին Հեթանոս-ավալոնները կարծում ելին, վոր ձուռն՝ վորպես կյանքի սաղմ, կախարհական նշանակութուն ունի և լավագույն զոհաբերութունն է համարվում նախնիքների հոգիների համար: Կարմիր գույնը արյունի նշանակն է, իսկ արյունը վորդիների և աստվածների սիրած ուտելիքն է: Հեթանոսները ձվերի կեղեվը կախում ելին սրբազան ծառերից, քցում ելին գիշերը, վորոնք իբր թե դնում ելին դեպի ստորյերկրյա թագավորութունը, վորտեղ հոգիներն են ապրում: (Բ. Լ.): Կյանքի սաղմնավորումը ձվի մեջ մարդիկ համարում ելին մեռելի հարութունը ձվից. ձուռն դարձավ աստվածների հարութուն խորհրդանշանը, սիմբոլը:

Հ. 97. Ինչպե՞ս է ծագել զանգազարութունը:

Պ. 97. Զանգերը քրիստոնեյական տաճարներում

յերեվացի են ծիսյն մեր թվականի VI դարից: Դեռ քրիստոնեյական ժամանակից առաջ յենթադրում ելին, վոր զանգերի զողանջը վտարում է չար վորդիներին, նախապես պաշտպանում է կայծակի հարվածներից ամսլորոպի ժամանակ: Դեռ այժմ էլ ուղղափառութեան արարողութեան մեջ՝ զանգերն որհնելիս, մի աղոթք կա, վոր մատնանշում է այդ նախապաշարումների կենսունակութունը:

Հ. 98. Ի՞նչ է մեղուզան:

Պ. 98. Մեղուզան մագաղաթի մի քառակուսի կտոր է, վորի մի յերեսի վրա աղոթք է գրված, իսկ մյուսի վրա՝ «չչադայ» (ամենակարող) խոսքը: Խողովակաձև վաթաթած այդ մագաղաթը դրվում է մի փոքրիկ թիթեղի կամ կաշվի տուփի մեջ, վորի մեջտեղում մեծակ է թողնված, վորտեղից տեսանելի յե «չչադայ» խոսքը: Մեղուզան բեմվեռում են տան ամեն մի դռան վրա մուտքի ալ կողմից թեք դիրքով: Մեղուզան պետք է պաշտպանի հրեյական բնակարանները ամեն տեսակի դժբախտութուններից, փակի չար վորդիների ճանապարհը: Այդպիսի արարկանները կոչվում են ամուխեր՝ թալիսմաններ և լայնորեն տարածված են վայրենի ժողովուրդներից շատերի մեջ (Բ. Լ.):

Հ. 99. Ինչպե՞ս են ծագել կրոնական տոները:

Պ. 99. Կրոնական տոները գլխավորապես արտադրական նշանակութուն ունենալով, ժամանակ, յերբ վորորդութունը և պատեղների ու սերմունքների հավաքումը հնարավոր են առանց վարնե մնա հասցնելու հաստատախոս կենդանիների և բույսերի թաղմամբ, վերացվում են ամեն տեսակ «տարուն» (արգելք): Տո-

աւեմական կենդանիների միտը, արմատապտուղները և առտեմական բույսերը մարդու սւտեղիքի մեջ են մըանում և սւտում են բոլոր սովորական նորմաները գերակշռող քանակութեամբ: Տոնական վոկրամոլութեան շքեղութեանը մարդ կարող է գործադրել ավելի ևս այն պատճառով, վոր այդ վոչ միայն հնարավոր է, այլ և վորոշ չափով անհրաժեշտ: «Տարուն» վերացնելու մոմենտները զուգադիպում են սննդամթերքների այս կամ այն տեսակի խոշոր քանակի կուտակման մոմենտներին: Այդպիսի մոմենտներ են հանդիսանում պտուղների բերքահավաքը, հացերի հասունանալը և մատղաշ անասունների մորթելու համար անհրաժեշտ հասակին հասնելը: Բնական է, վոր ամենից ավելի շուտ փչացող մթերքներ ուտվում են, վորպեսզի իզուր տեղը ապարդյուն կերպով չփչանան: Այսպես են ծագել տոնական խնձուղները (Լոգինով):

Ներկայումս տոնները կրօնական աղբիցութեանը մասայի վրա տարածելու հազորդիչներ են հանդիսանում: Տոնական թափոնները, արարողութեանները միջոց են ծառայում աշխատավորներին հետու պահելու դասակարգային պայքարի խնդիրներից, դասակարգային խաղաղութեան քարոզելու միջոց:

Հ. 100. Ինչպե՞ս է ծագել ծննդյան տոնածառը:

Պ. 100. Հնումը, քրիստոնէսութեան ընդունելուց շատ առաջ, գերմանացիք պաշտում էին մշտադալար ծառը, վորպես յերջանկութեան և կյանքի ծառ. մեծածառ արեւադարձի տոնին յեղենի ծառը դարձարում էին և հետո հանդիսավոր կերպով այրում, մնացած ուժուխն ու մոխիրը սրբապան էին համարում և նրանց զանազան

եյին շտեմարանների մեջ, վորպեսզի մթերքները մկենրից պաշտպանեն, իսկ մեացորդները պահում էին մկնչե գառուն և դառնանը, աշխատանքներն սկսելուց առաջ, ցանում էին դաշտերում և բանջարանոցներում, վորպէսզի բերքն ապահովեն: Քրիստոնէսութեան ընդունելուց հետո՝ յեղենի այրելու սովորութիւնը փոխարինվեց տոնածառի վրա մոմեր վառելով, սակայն «տոնածառ վառել» արտահայտութեանը, վոր հին սովորութիւն է հիշեցնում, պահպանվեց մինչև մեր օրերը: (Նիկոլսկի, «Հրեյական տոների ծագումը» էջ 28):

Հ. 101. Ինչպե՞ս է ծագել խանուկի տոնը:

Պ. 101. Հրեյաները խանուկին տոնում են ի հիշատակ տաճարի նվերագարծման՝ սիրիացիներից այն հետ իլելուց հետո: Տոնի իսկական նշանակութեանը և լույս վառելու իմաստը (տոնի օրվան համապատասխան թվով մոմեր են վառում) մենք կհասկանանք, յեթե աշխարհութեան դարձնենք տոնի ժամանակի վրա: Տոնը կատարվում էր զեկտեմբերի վերջին, մարան արևադարձի ժամանակ, յեթե օրերն սկսում են արագորեն յերկարել և արևի ջերմութեանը մարանից դեպի ամառը դնալով աճում է: Գրեթե բոլոր յերկրագործ ժողովուրդների մեջ այդ մոմենտի հետ է կապված տոնը. ավելի շատ այդ տոնը կազմում է արևի ծննդյան տոն. քրիստոնէսյանների մեջ այդ տոնը Քրիստոսի ծննդյան տոնն է:

Հ. 102. Ո՞րն է պետք դասելը:

Պ. 102. Չասկական տոնի հիմքումը շահագործող դասակարգերին ձեռնտու, բանութեանը անսահմանօրեն, բացարձակապես չընդդիմանալու իմաստն է դրված:

Քրիստոսի նման՝ վորը հոգարուիթյամբ համաժայնեց  
